

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» ----- 2021թ.

N--- Ա

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 83-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է՝**

1. Ընդունել ի գիտություն Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված Երևանի զարգացման 2020 թվականի ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 83-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Երևանի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ քաղաքապետը հաշվետվություն է ներկայացնում Երևան քաղաքի ավագանուն:

Երևանի զարգացման 2020 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը կազմվել է Երևանի քաղաքապետի 05.04.2019թ. 1041-Ա որոշմամբ ընդունված ձևաչափով:

Երևանի զարգացման 2020 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը հիմնականում բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ «Ծրագրի կամ միջոցառման անվանում», «Նախատեսված աշխատանքների նկարագիր», «Աշխատանքների իրականացման գործընթաց», «Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ» և «Նշումներ»: Հաշվետվության կառուցվածքում առանձին ներկայացված են քաղաքային տնտեսության ոլորտները և Երևանի վարչական շրջանները:

Հաշվետվության մեջ մանրամասն ներկայացված են Երևանի զարգացման 2020 թվականի ծրագրով նախատեսված և իրականացված աշխատանքների վերաբերյալ ծավալային և քանակական տվյալները:

Երևանի քաղաքային համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2021 թվականի փետրվարի 11-ի նիստի դրական եզրակացությամբ «Երևանի զարգացման 2020 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) ներկայացվել է հանրային քննարկումների: Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ.45-Ն և Երևանի քաղաքապետի 2021 թվականի փետրվարի 10-ի հ. 270-Ա որոշումների համաձայն՝ 2021 թվականի փետրվարի 11-ից 25-ը ներառյալ կազմակերպվել են հանրային քննարկումներ՝ հանրային բաց լսումների եղանակով: Հանրային քննարկումների արդյունքներն ամփոփվել են 2021 թվականի փետրվարի 26-ին հրավիրված Խորհրդի նիստում: Խորհրդի անդամների կողմ քվեարկությամբ տրվել է դրական եզրակացություն՝ Նախագիծը սահմանված կարգով Երևան քաղաքի ավագանու քննարկմանը ներկայացնելու համար:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ Երևան քաղաքի ավագանուն է ներկայացվում Երևանի զարգացման 2020 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևանի զարգացման 2020 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Երևանի զարգացման 2020 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ

Հավելված  
Երևան քաղաքի ավագանու  
2021 թվականի մարտի \_\_\_-ի  
N \_\_\_-Ա որոշման

# Երևանի զարգացման 2020 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանման անվանումը					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանում	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
<b>ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>					
<b>ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ</b>					
1.	Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում	Ծրագրի շրջանակներում 2020 թվականին նախատեսվում է ձեռքբերել ներքոթվարկյալ սարքավորումները. Ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք 2 տվիչով՝ 10 հատ Արյան մեջ տրոպոնինի մակարդակը որոշող սարք 10 հատ Իմունոֆերմենտային անալիզատոր 7 հատ Բիոքիմիական անալիզատոր՝ 20 հատ Կոագուլոմետր՝ 14 հատ Ավտո-ռեֆ-կերատոմետր՝ 8 հատ Ճեղքային լամպ՝ 6 հատ Էլեկտրասրտագրության (ԷՍԳ) երկարատև մոնիտորինգի կրովի համակարգ /հոլտեր/՝ 5 հատ Կոլպոսկոպ՝ 7 հատ Գինեկոլոգիական սեդան՝ 39 հատ Սպիրոմետր՝ 1 հատ	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի կայացել է՝ <b>ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/3-1</b> <b>ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/3-2</b> <b>ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/3-3</b> <b>ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/7</b> <b>ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/5</b> <b>ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/14-1</b> <b>ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/14-2</b> <b>ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/14-3</b> <b>ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/14-4</b> <b>ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/14-5</b> Ձեռք է բերվել՝ 1. Արյան մեջ տրոպոնինի մակարդակը որոշող սարք՝ 10 հատ 2. Ճեղքային լամպ՝ 6 հատ 3. Էլեկտրասրտագրության (ԷՍԳ) երկարատև մոնիտորինգի կրովի համակարգ /հոլտեր/՝ 5 հատ 4. Ջերմային տպիչ՝ նախատեսված արյան մեջ տրոպոնինի մակարդակը որոշող սարք համար՝ 10 հատ 5. Կոլպոսկոպ՝ 5 հատ 6. Ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք 2 տվիչով 7. Իմունոֆերմենտային	1.«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ 10.04.2020-08.06.2020թ 2. «Մեդտեխսերվիս» ՍՊԸ 15.04.2020թ.-13.06.2020թ. 3. «Մեդէքսպերտ» ՍՊԸ 14.04.2020թ-12.06.2020թ. 4.«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ 13.04.2020թ-11.06.2020թ. 5. «Մեդտեխսերվիս» ՍՊԸ 10.08.2020թ-18.10.2020թ. 6. «Ավէմեդ» ՍՊԸ 27.07.2020թ-04.09.2020թ. 7. «Իմունոֆարմ» ՍՊԸ 28.07.2020թ-04.10.2020թ. 8. «Վիոլա» ՍՊԸ 24.07.2020թ-01.09.2020թ. 9. «Յունիմեդ» Հայ-Ռուսական ՀԶ ՍՊԸ 27.07.2020թ-04.09.2020թ. 10. «Մեդէքսպերտ» ՍՊԸ 23.07.2020թ-01.09.2020թ.	

			անալիզատոր՝ 7 հատ 8. Բիոքիմիկական անալիզատոր՝ 20 հատ 9. Ավտոռեֆլեքատումետր՝ 8 հատ 10. Գինեկոլոգիական սեղան՝ 39 հատ		
2.	Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում	նախատեսվում է «Նոր Արեշ պոլիկլինիկա», «Արշակունյաց պոլիկլինիկա», «Թիվ 12 պոլիկլինիկա», «Նորագավիթ պոլիկլինիկա» և «Նուբարաշեն պոլիկլինիկա» ՓԲԸ-ներում կատարել սանհանգույցների հիմնանորոգման, դռների և էլեկտրական լարերի փոխարինման, ներքին պատերի հարդարման, ներկման աշխատանքներ	Տես աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության հաշվետվություն /համակարգող ստորաբաժանում/		
3.	Բնակչությանը կոմպյուտերային և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայության տրամադրում	Ծրագրի շրջանակներում 2020 թվականին նախատեսվում է ձեռքբերել. Կոմպյուտերային տոմոգրաֆիայի հետազոտություն /ԿՏ/՝ 150 հատ, Մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտություն /ՄՌՏ/՝ 100 հատ:	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի կայացել է մրցույթ, կնքվել է պայմանագիր <b>ԵՔ-ԳՀՇՁԲ-20/43</b> Մրցույթի արդյունքում ձեռք է բերվել կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն՝ թվով 150 հատ, մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայություն՝ թվով 100 հատ 31.12.2020թ. դրությամբ 150 քաղաքացու մատուցվել է կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն, 100 քաղաքացու մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայություն	«ՄԻԲՍ» ՍՊԸ 19.02.2020թ.-25.12.2020թ.	
4.	«Առողջության ապահովագրության» փաթեթի ձեռքբերում	Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզների և շախմատի դպրոցների, երաժշտական և	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: <b>ԵՔ-ԲՄՇՁԲ-20/21</b>	1. «Միլ Ինշուրանս» ԱՓԲԸ 20.03.2020թ.-20.03.2021թ. 2. «Միլ Ինշուրանս» ԱՓԲԸ 16.06.2020թ.-15.06.2021թ.	

		<p>արվեստի դպրոցների, մարզադպրոցների, մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության, մշակույթի կենտրոնների, այլ մշակութային կազմակերպությունների, ինչպես նաև «Թափառող կենդանիների վնասագերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի և «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի հաստիքացուցակներով նախատեսված հաստիք զբաղեցնող աշխատողների համար և Երևանի քաղաքապետարանի /ներառյալ Երևանի վարչական շրջանները, սոցիալական ծառայությունների և քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինները/, Երևանի ենթակայության գրադարանների, թանգարանների, թատրոնների հաստիքացուցակներով նախատեսված հաստիք զբաղեցնող աշխատակիցների, ինչպես նաև «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» փակ բաժնետիրական ընկերության և «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության, կառավարման տեխնոլոգիաների, Երևան հիմնադրամի, «Երևանի կառուցապատման ներդրումային ՕԻԳ» ՀՈԱԿ-ի աշխատողների համար «Առողջության</p>	<p>Ձեռք է բերվել. Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզների և շախմատի դպրոցների, երաժշտական և արվեստի դպրոցների, մարզադպրոցների, մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության, մշակույթի կենտրոնների, այլ մշակութային կազմակերպությունների, ինչպես նաև «Թափառող կենդանիների վնասագերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի և «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի հաստիքացուցակներով նախատեսված հաստիք զբաղեցնող աշխատողների համար «Առողջության ապահովագրության» փաթեթի ձեռք բերում Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ <b>h.ԵՔ-ԲՄՕՁԲ-20/85</b> Ձեռք է բերվել. Երևանի քաղաքապետարանի /ներառյալ Երևանի վարչական շրջանները, սոցիալական ծառայությունների և քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինները/, Երևանի ենթակայության գրադարանների, թանգարանների, թատրոնների հաստիքացուցակներով նախատեսված հաստիք զբաղեցնող աշխատակիցների, ինչպես նաև «Գերատեսչական շենքերի</p>		
--	--	---	--	--	--

		ապահովագրության» փաթեթի ձեռք բերում	պահպանման և շահագործման» փակ բաժնետիրական ընկերության և «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության, կառավարման տեխնոլոգիաների, Երևան հիմնադրամի, «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի աշխատողների համար «Առողջության ապահովագրության» փաթեթ		
--	--	-------------------------------------	--	--	--

**ԱՌԵՎՏՈՒՐ և ՄՊԱՍԱՐԿՈՒՄ**

1.	Առևտրի, սպասարկումների և կենցաղային ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ձևավորում և ներկայացում, ինչպես նաև առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործունեության կանոնների և դրանց կիրառման լրացուցիչ պայմանների մշակում:	Առաջարկվելու է «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում կատարել լրացումներ և սահմանել շինանյութերի վաճառքի և կենցաղային սպասարկման օբյեկտների ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքի տեսակներ: Առաջարկություններ կներկայացվեն նաև առևտրի և սպասարկման ոլորտի այլ օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:	Առևտրի և սպասարկումների ոլորտում օրենսդրական կարգավորումներ կատարելու նպատակով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Առևտրի և ծառայությունների մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքներում և վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, մի շարք օրենքների նախագծեր:	Առևտրի և սպասարկումների վարչություն Կատարման ժամկետ՝ ամբողջ տարվա ընթացքում	
2.	Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելում և արգելում, արդյունավետությունը բարձրացնելու նպատակով օրենսդրական փոփոխությունների կատարում:	Առաջարկություններ կներկայացվեն բացօթյա ապօրինի առևտուրը կանխարգելելու վերաբերյալ օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ: Բացօթյա առևտրի	Լրամշակվել և շրջանառության մեջ է դրվել վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը, որով նախատեսվում է լիազորություն տրամադրել տեղական	Առևտրի և սպասարկումների վարչություն, վարչական շրջանների առևտրի, սպասարկումների և գովազդի բաժիններ Կատարման ժամկետ՝ ամբողջ տարվա ընթացքում	



		նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում:	ինքնակառավարման մարմիններին՝ ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու դեպքում բացօթյա առևտրի անմիջական օբյեկտ համարվող ապրանքները վերցնել: Հսկողություն է իրականացվել բոլոր 12 վարչական շրջաններում և կազմվել է թվով 1204 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն:		
3.	Շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում:	Գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում:	Երևանի քաղաքապետարանը ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ յուրաքանչյուր շաբաթ, կիրակի և ամանոթյա նախատոնական օրերին Հրազդան մարզադաշտի հարակից տարածքում կազմակերպել է գյուղատնտեսական արտադրանքի տոնավաճառ:	Առևտրի և սպասարկումների վարչություն Կատարման ժամկետ՝ 2-4 եռամսյակներ	
4.	Հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայության կազմակերպման կանոնակարգում:	Բացօթյա սրճարանների գործունեության կանոնակարգում: Առաջարկություններ կներկայացվեն հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայության կազմակերպման վերաբերյալ օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:	Նշված ոլորտը կանոնակարգելու համար լրամշակվել և շրջանառության մեջ է դրվել համապատասխան օրենսդրական նախագծերի փաթեթ: 2020 թվականի ընթացքում թվով 311 տնտեսվարող սուբյեկտների հետ կնքվել է հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելու վերաբերյալ պայմանագիր:	Առևտրի և սպասարկումների վարչություն Կատարման ժամկետ՝ 1-3 եռամսյակներ	
5.	Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում (մայթերում, կանաչապատման համար նախատեսված տարածքներում, ճանապարհների բանուկ մասերին կից հատվածներում) կրպակների, տաղավարների և ժամանակավոր այլ	Զգործող, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և սպասարկման կրպակների ապամոնտաժում և առևտրի առանձին օբյեկտների արդիականացում: Մայրաքաղաքում քաղաքակիրթ առևտուր կազմակերպելու նպատակով առաջիկայում միջոցներ կձեռնարկվեն չգործող,	2020 թվականի ընթացքում ապամոնտաժվել է թվով 12 ապօրինի տաղավար՝ Վ. Փափազյան և Ա. Խաչատրյան փողոցների խաչմերուկ, Աբովյան փողոց-Մայաթ Նովա պողոտա խաչմերուկ, Հ. Հակոբյան փողոցի թիվ 4 շենքի դիմաց, Գյուլբենկյան-Ա. Խաչատրյան խաչմերուկ (2 հատ), Թամանյան 16/1,	Առևտրի և սպասարկումների վարչություն Կատարման ժամկետ՝ ամբողջ տարվա ընթացքում	

	<p>շինությունների թվաքանակի կրճատման և ապամոնտաժման, դրանց հետագա գործունեության նպատակահարմարության և օրինականության վերաբերյալ հարցերի ուսումնասիրություն և ապամոնտաժում:</p>	<p>լքյալ, հողի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և սպասարկման կրպակների ապամոնտաժման ու արդիականացման ուղղությամբ: Առաջնահերթությունը կտրվի կանաչ տարածքներում և մայթերի վրա տեղադրված կրպակների ապամոնտաժմանը:</p>	<p>Դ. Վարուժան-Մալաթիա խաչմերուկ, Իսահակյան-Տերյան խաչմերուկ, Նալբանդյան 128, Չարենցի 8, Աբովյան 38, Կոբյունի 16:</p>		
<b>ԱՐՏԱՔԻՆ ՉԵՎԱՎՈՐՈՒՄ և ԳՈՎԱԶԳ</b>					
1.	<p>Շենքերի գովազդային անձնագրերի մշակում և գովազդների համապատասխանեցում գովազդային անձնագրերին</p>	<p>Գենտրոն վարչական շրջանում նախատեսվում է մրցութային կարգով իրականացնել թվով 100 հատ շենքերի գովազդային անձնագրերի պատվիրում:</p>			<p>Աշխատանքները չեն իրականացվել արտակարգ դրությամբ պայմանավորված:</p>
2.	<p>Էլեկտրոնային թույլտվությունների տրամադրում</p>	<p>Արդեն իսկ ստեղծված էլեկտրոնային բազայի հիման վրա կստեղծվի կայք, որի միջոցով գովազդային կազմակերպությունները և տնտեսվարողները կտեսնեն յուրաքանչյուր շենքի գովազդային անձնագիրը և հնարավորություն կունենան էլեկտրոնային եղանակով ուղարկել հայտեր գովազդի հաստատման, տեղադրման թույլտվություն ստանալու համար: Հնարավորություն կտրվի նաև էլեկտրոնային եղանակով վճարել արտաքին գովազդի համար նախատեսված տեղական տուրքի գումարը: Նախատեսվում է իրականացնել նոր էլեկտրոնային</p>	<p>2020 թվականին իրականացվել է էլեկտրոնային կառավարման համակարգի արդիականացման աշխատանքներ, որի միջոցով տրվել է 12475 թույլտվություն՝ 3840 կրիչների համար:</p>	<p>Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն (հունվար-դեկտեմբեր)</p>	

3.	Ներդրումային ծրագրերի իրականացում՝ որպես փոխհատուցում գովազդային մակերեսների տրամադրման սկզբունքով	կայքի պիլոտային փորձարկում: 2020 թվականին նախատեսվում է ներդրումային ծրագրով իրականացնել գովազդային մակերեսների տրամադրմամբ մասնավոր կազմակերպություններին նոր կանգառասրահների, հեծանիվական գառների, և վերգետնյա անցումների մրցույթների հայտարարում:			Աշխատանքները չեն իրականացվել արտակարգ դրությամբ պայմանավորված:
4.	Գովազդային վահանակների մրցութային կարգով տրամադրման և տեղական տուրքերի և վճարների հավաքագրման նոր մեխանիզմի ներդրում	Նախապես սահմանել գովազդային վահանակների բոլոր պոտենցիալ վայրերը և տեսակները՝ ելնելով քաղաքի համար դրանց նպատակահարմարությունից, Բաժանել պոտենցիալ գովազդային տեղերը լոտերի և հայտարարել մրցույթ գովազդային կազմակերպությունների միջև:			Աշխատանքները չեն իրականացվել արտակարգ դրությամբ պայմանավորված:
<b>Այլ ծրագրեր</b>					
5.	Գովազդային տարածքների հաշվառման, չափագրման, իրավական դաշտին համապատասխանեցմանն ուղղված աշխատանքներ	Նախատեսվում է իրականացնել գովազդային տարածքների հաշվառման, չափագրման, իրավական դաշտին համապատասխանեցմանն ուղղված աշխատանքներ՝ Երևանի բյուջե համապատասխան մուտքերի ապահովման նպատակով:	2020 թվականին իրականացվել է վարչական շրջաններում առկա գովազդների գույքագրման և չափագրման աշխատանքներ: 2020 թվականին հաստատվել են թվով 1740 հատ գովազդային էսքիզներ: 2020 թվականին արտաքին գովազդի տուրքը սահմանվել է 1.401,500,0 դրամ, հավաքագրվել է 1.453,360,4 ՀՀ դրամ:	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն, Վարչական շրջաններ, Գովազդային կազմակերպություններ (հունվար-դեկտեմբեր)	
6.	Ապօրինի տեղադրված գովազդային վահանակների ապամոնտաժման աշխատանքների իրականացում	Կշարունակվեն օրենքին չհամապատասխանող, ինչպես նաև ինքնակամ և ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերման և	<b>ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/9</b> Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր:	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն, վարչական շրջաններ, «Ձևավորում» ՓԲԸ 08.04.2020թ.	

		<p>ապամոնտաժման աշխատանքները, կշարունակվի խիստ հսկողությունը մայրաքաղաքի տարածքում առկա գովազդային վահանակների հայալեզու գրվածքը օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:</p>	<p>2020 թվականին ընթացքում ապամոնտաժվել է թվով 1188 հատ ապօրինի տեղադրված գովազդային վահանակներ:</p>	<p>(հունվար-դեկտեմբեր)</p>	
7.	<p>Քաղաքային միջոցառումների կազմակերպման, տպագրման և ձևավորման աշխատանքներ</p>	<p>Նախատեսվում է շարունակել տոնական միջոցառումների, թեմատիկ բաներների, հրավիրատումների, շնորհակալագրերի, տաղավարների, ֆլայերների, ինստալյացիաների, ստիկերների ձևավորումն ու կազմումը:</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Երևան արևային համայնք ֆլայերի կազմում,</li> <li>2. «Investment Proposal Construction of an area adjacent to the Saint Gregory the Illuminator Cathedral» ներդրումային ծրագրի բուկլետի կազմում,</li> <li>3. Շնորհակալագրերի ու պատվոգրերի ձևավորում,</li> <li>4. Դիանա Աբգարի անվան պուրակի ցուցանակի ձևավորում,</li> <li>5. ԵՊԲՀ-ի դիմացի գետնանցման տաղավարների նախագիծ-առաջարկ,</li> <li>6. Մարտի 8-ի տոնական միջոցառման նախագիծ-առաջարկ,</li> <li>7. Եմ-ն Երևանի համար Արևային համայնք «Լեդ լուսատուներ» տեղեկատվական բաների, ինֆոգրաֆիկայի ձևավորում, կազմում,</li> <li>8. Շինհրապարակների բաներների կազմում,</li> <li>9. Փողոցների և շենքերի անվան ու համարակալման ցուցանակների էսքիզ</li> <li>10. Զարգացման ծրագրի բուկլետի ձևավորում կազմում,</li> <li>11. Հեծանվական գառների էսքիզ,</li> <li>12. Էկո գրիչների էսքիզ,</li> <li>13. Covid-19 սոցիալական գովազդի</li> </ol>	<p>Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն (հունվար-դեկտեմբեր)</p>	

			<p>Ֆլայերների կզմում,  14. Ղարաբաղյան պատերազմի վերաբերյալ սոցիալական գովազդի բաներների կզմում,  15. Նստարանների, աղբամանների նոր դիզայնի կոնստրուկտիվ նախագիծ-առաջարկ,  16. Ծաղկի վաճառակետ-տաղավարի նոր դիզայնի կոնստրուկտիվ նախագիծ-առաջարկ,  17. Գովազդային վահանակի և գովազդային վահանակով հեծանվական գառների նոր դիզայնի կոնստրուկտիվ նախագիծ-առաջարկ,  18. Երևան քաղաքի նոր տրանսպորտային միջոցների ձևավորում,  19. Սարյան և Աբովյան արդիականացվող պուրակների համար նստարանների և աղբամանների նախագիծ-առաջարկ,  20. Ավագանու անդամների անվանական տրաֆարետներ,  21. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարության և ավագանու անդամների այցեքարտերի կզմում,  22. Հանձնարարականների բլանկների կզմում,  23. Ամանորյա կոնֆետների տուփերի ձևավորում էսքիզ,  24. Փողոցների և շենքերի անվան ու համարակալման ցուցանակների էսքիզ,  25. Տեղական հարկերի վճարման օգտակարության վերաբերյալ սոցիալական գովազդի բաներների</p>		
--	--	--	---	--	--

			<p>Էսքիզ, 26. Երևանի քաղաքապետի և աշխատակազմի քարտուղարի ամանորյա շնորհավորական բացիկի դիզայն, 27. Կոնֆետների տուփերի ձևավորում:</p>		
8.	Դրոշների փոխարինման և դրոշակազարդման աշխատանքներ	<p>2020 թվականին ամսական կտրվածքով նախատեսվում է իրականացնել 529 հիմնային պատվանդանների դրոշների փոխման, մաքրման և սպասարկման աշխատանքներ: 2020 թվականին կիրականացվեն դրոշակազարդման աշխատանքներ օտարերկրյա պատվիրարկությունների պետական պաշտոնական այցերի ժամանակ: Նախատեսվում է իրականացնել մի շարք մշակութային միջոցառումների ձևավորման և դրոշակազարդման աշխատանքներ (Բանակի օր, Մուրբ Սարգիս, Կանանց միամսյակ, Մայիսի 1, Մայիսի 9 Մայիսի 28, Վերջին զանգ, Երեխաների պաշտպանության օր, Երևանյան ամառ, Սահմանադրության օր, Անկախության օր, Ուսուցչի օր, Էրեբունի-Երևան, Ամանորյա տոնակատարություններ և Եղեռնի սգո արարողությունների միջոցառումների ձևավորման աշխատանքներ: Ձեռք են բերվել ՀՀ եռագույն դրոշներ:</p>	<p><b>1.ԵՔ-ՄԱՄՁԲ-20/29</b> <b>2.ԵՔ-ԳՀՄՁԲ-20/57</b> <b>3.ԵՔ-ԲՄՄՁԲ-20/30</b> <b>4.ԵՔ-ՄԱՄՁԲ-20/25</b> <b>5.ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/122</b></p> <p>Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր:</p> <p>1.Իրականացվել է անկախության օրվան նվիրված դրոշակազարդարում: 2.Իրականացվել է դրոշների փոխման աշխատանքներ: 3.Իրականացվել է Հորդանանի թագավորի այցի կապակցությամբ դրոշակազարդման աշխատանքներ: 4.Իրականացվել են մի շարք միջոցառումների դրոշակազարդման և ձևավորման աշխատանքներ: 5. Ձեռք է բերվել 3000 հատ 1մ- 2մ չափերի եռագույն դրոշներ:</p>	<p>Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն, մրցույթում հաղթող կազմակերպություններ</p> <p>1. «Ձևավորում» ՓԲԸ 01.02.20թ. 2. «Տերմոպրոտեկտ» ՍՊԸ 05.03.20թ 3. «Ձևավորում» ՓԲԸ 01.02.20թ. 4. Ձևավորում» ՓԲԸ 24.01.20թ. 5. «ԱԼՊԱՆՈ» ՍՊԸ 06.04.20թ.</p>	
9.	Փողոցների, հրապարակների,	Երևան քաղաքի փողոցների,	<b>1. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20-108/1</b>	Արտաքին ձևավորման և	

	<p>այգիների կահավորման աշխատանքների իրականացում:</p>	<p>հրապարակների, այգիների կահավորման նպատակով նախատեսվում է նորոգվեն անվճար հայտարարությունների տախտակներ, փողոցների ուղենիշներ, աղբամաններ և նստարաններ: Կիրականացվեն և կտեղադրվեն նստարաններ, աղբամաններ և ցուցանակներ:</p>	<p><b>2. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20-108/2</b>  <b>3. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20-128</b>  <b>4. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/7-1</b>  <b>5. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/7-2</b>  <b>6. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/7-3</b>  <b>7. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/15</b></p> <p>1. Իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ Աղբամանի ամբողջական վերանորոգում - 100 հատ  Աղբամանի մասնակի վերանորոգում - 645 հատ:  2. Կատարվել են հետևյալ աշխատանքները՝ նստարանի ամբողջական վերանորոգում - 50 հատ:  3. Կատարվել են հետևյալ աշխատանքները՝ նստարանի մասնակի վերանորոգում - 900 հատ:  4. Պայմանագրի շրջանակներում գնվել է թվով 500 հատ «Երևան» գրվածքով նստարան, որից Երևանի քաղաքապետարանին ի պահ տրված 141 նստարանից 2020 թվականի ընթացքում տեղադրվել են թվով 44-ը:  5. Կնքված պայմանագրի շրջանակներում գնվել է թվով 600 ձուլվածքով աղբաման, որից Երևանի քաղաքապետարանին ի պահ տրված 249 նստարանից 2020 թվականի ընթացքում տեղադրվել են թվով 42-ը:  6. Կնքված պայմանագրի շրջանակներում գնվել է թվով 200 մետաղյա դույլ, որից 27 հատ մետաղյա դույլ ի պահ է տրվել Երևանի քաղաքապետարանին՝ 2020 թվականի</p>	<p>գովազդի վարչություն, մրցույթում հաղթող կազմակերպություններ</p> <p>1. «Ձևավորում» ՓԲԸ  07.09.2020թ.</p> <p>2. «Բեկյալ» ՍՊԸ -ի  07.09.2020թ.</p> <p>3. «Քնար Շին» ՍՊԸ  02.10.2020թ.</p> <p>4. «Նիկոլ Դուման» ՍՊԸ  20.08.2019թ.</p> <p>5. «Բելվետ» ՍՊԸ  20.08.2019թ.</p> <p>6.«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ  20.08.2019թ.</p> <p>7.«Գործ-555» ՓԲԸ  30.08.2019թ.</p>	
--	--	---	--	--	--

			ընթացքում տեղադրելու համար, սակայն մետադյա դույլ 2020թ.-ին չի տեղադրվել: 7.Կնքված պայմանագրի շրջանակներում գնվել է թվով 400 հասարակ նստարան, որից Երևանի քաղաքապետարանին ի պահ տրված 29 նստարանից 2020 թվականի ընթացքում տեղադրվել են թվով 7-ը:		
10.	Աշխատանքներ մասնագիտացված գովազդային կազմակերպությունների հետ	2020 թվականին շարունակվելու է աշխատանքը մասնագիտացված գովազդային կազմակերպությունների հետ՝ գովազդային վահանակների արդիականացման, սոցիալական գովազդային ծրագրերի իրականացման և Երևան համայնքի հետ աշխատանքի որակի բարձրացման ուղղություններով:	Քննարկվել և իրականացվել են մասնագիտացված գովազդային կազմակերպությունների հետ՝ գովազդային վահանակների արդիականացման, էսքիզների ներկայացման, թույլտվությունների տրամադրման ինչպես նաև սոցիալական գովազդների տեղադրման աշխատանքներ: 2020 թվականին ներկայացրել են թվով 360 հատ դիմում:	Աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն, գովազդային գործակալություններ (հունվար-դեկտեմբեր)	
11.	Սոցիալական գովազդների տեղադրում:	Սոցիալական գովազդների տեղադրումը կիրականացվի համայնքային և/կամ հանրապետական հանձնաժողովի կողմից այդպիսին ճանաչվելուց հետո:	2020 թվականին համայնքային հանձնաժողովի կողմից թվով 22 հատ գովազդներ ճանաչվել են սոցիալական բնույթի:	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն, Համայնքային հանձնաժողով: (հունվար-դեկտեմբեր)	
<b>ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>					
1.	Սարալանջի 10 հա բուֆերային անտառաշերտի վերականգնում	Բուֆերային գոտի հանդիսացող տարածքներում նախատեսվում է իրականացնել ծառերի սանիտարական էտ, ծառերի և թփերի տնկում, նոր ոռոգման ցանցի ստեղծում, ջրավազանի և պոմպակայանի ստեղծում և այլ աշխատանքներ:	<b>ԵՔ-ԲՆԱՇՁԲ-20/1</b> Ավարտվել է ոռոգման ցանցի կառուցման աշխատանքները, ծառերի և թփերի տնկման աշխատանքների կատարման համար հայտարարվել է մրցույթ, հաղթող մասնակից է ճանաչվել <<Ագրոատոմ>> ՍՊԸ-ն, որը հրաժարվել է պայմանագիր կնքել	«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ 14.02.2020թ.-12.06.2020թ.	



			Երևանի քաղաքապետարանի հետ:		
2.	Կոմիտասի անվան այգու հիմնանորոգում	Նախատեսվում է իրականացնել այգու բարեկարգման, ինչպես նաև լայնածավալ կանաչապատման, դեկորատիվ բարձր որակ ունեցող տնկիների և ծաղկապատման տարրերի կիրառմամբ աշխատանքներ:	Խորքային հորը կառուցվել է, միացվել ռոտոման ցանցին:		Ծրագրի իրականացման ժամկետը անորոշ է, քանի որ այգու տարածքում նախատեսվում է նոր ճանապարհի կառուցել: Այգու բարեկարգման աշխատանքներ կիրականացվեն ճանապարհի կառուցման աշխատանքների ավարտից հետո:
3.	Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների բարելավում	Նախատեսվում է 2020թ-ին բարելավել Աշտարակ-Դավթաշեն նոր կառուցված ճանապարհահատվածի հարակից 4,5 հա կանաչ տարածքը: Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների բարելավում՝ նոր սիզամարգերի ստեղծման, ծառատունկի, ծաղկապատման շնորհիվ:	Աշտարակ-Դավթաշեն նոր կառուցված ճանապարհահատվածի հարակից 4.5 հա կանաչ տարածքի որոշակի հատվածում իրականացվել է գողացված փականների մասնակի փոխարինում, որից հետո ռոտոման համակարգը արդյունավետ է դարձել և բարելավվել է սիզամարգերի վիճակը: Դավթաշենի և Սիլիկյանի խորքային հորերի համար ստացվել է ջրօգտագործման թույլտվությունները: Խորքային հորերը ունեն նախագիծ, հորատումը կիրականացվի 2021թ-ին:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ Հունվար-դեկտեմբեր	
4.	Ծիծեռնակաբերդի անտառպուրակի 8.0 հա հատվածի վերականգնում	Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է կատարել ծառերի առողջացման նպատակով բջջաշիվային էտ և ծառատունկի աշխատանքներ: Վերականգնել Ծիծեռնակաբերդի անտառպուրակի 8.0 հա մակերեսով համայնքային	<b>ԵՔ-ԳՀԱՇԶԲ-20/116</b> Տարածքում իրականացվել է ռոտոման նոր ցանցի նախագծման և կառուցման աշխատանքներ: Գարնանը իրականացվել է ծառերի բջջաշիվային էտ: Ներկայումս «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի կողմից իրականացվում է տարածքի	«Բիդեք» ՍՊԸ 10.09.2020թ.-25.12.2020թ.	

		սեփականություն հանդիսացող հատվածը:	լանդշաֆտային պլանավորում և կանաչ տնկարկների հաշվառում, որի ավարտից հետո կիրականացվեն կանաչապատման նախագիծ:		
5.	Ջրաշխարհի աջակողմյան լանջի 12 հա տարածքի անտառաշերտի վերականգնում	Ջրաշխարհի աջակողմյան լանջին ստեղծել կանաչ տնկարկներով պաշտպանիչ շերտ: Բուֆերային գոտի հանդիսացող տարածքներում նախատեսվում է իրականացնել ծառերի սանիտարական էտում, ծառատնկում, նոր ոռոգման ցանցի ստեղծում և այլ աշխատանքներ:	<b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/15</b> Իրականացվել են բուֆերային անտառային գոտու ստեղծման նախագծա-նախահաշվային աշխատանքներ:	«ԷՅ ՋԻ ԹԻ ՓԲՈՋԵՔԹ» ՍՊԸ 27.02.2020թ. 17.04.2020թ.	
6.	Կանաչապատման նորագույն մոտեցումների կիրառում	Առաջնահերթ է ներդնել կաթիլային եղանակով ոռոգման համակարգեր: Ստեղծել ծաղկանոցներ, որոնք համալրված կլինեն բազմամյա ծաղկասածիլներով: Որպես կոնցեպտ լուծում կիրառել ծաղկող թփերը կանաչ ցանկապատեր ստեղծելու համար (Հ. Հակոբյան, Ա. Խաչատրյան, Վ. Սարգսյան, Բեյրութի փողոցներ):	Թփապատումն իրականացվել է Էրեբունի, Տիգրան Մեծ փողոցներում, Նուբարաշենի այգում, Կոմիտաս, Ազատության, Վաղարշան-Քոչար, Լենինգրադյան, Հասրաթյան, Արզումանյան, Շինարարներ, Ազատության, Դավիթ-Անհաղթ փողոցներում, Պ. Սևակի պուրակում, Հաղթանակ զբոսայգում, Դրոյի, Բաբաջանյան, Խուդյակով, Սաֆարյան, Թևոսյան, Նանսեն, Դավիթ Բեկ, Բագրատունյաց, Գ. Նժդեհ, Արշակունյաց, Բաֆֆու փողոցներում: Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրումը քննարկվում է բոլոր նախագծերի կազմման ժամանակ: Վարչության կողմից իրականացվել է տնկիների կաշտոկականության և նրանց խնամքի մոնիթորինգ: Տնկիների շուրջ 70%-կենսունակ են: Իրականացվել է Բեյրութի և Իտալիայի փողոցների ոռոգման համակարգի կառուցումը:	Բնապահպանության վարչություն, «ԿՇՄՊ» ՀՈԱԿ Հունվար-դեկտեմբեր	
7.	Կանաչ տարածքների խնամքի	Նախատեսվում է 2020թ-ին ձեռք	Ձեռք են բերվել տրակտոր՝ սրսկում	1.«Հրաշք Այգի» ՍՊԸ	

	և ծառատնկման համար ժամանակակից մեքենա-սարքավորումների ձեռքբերում	բերել կոճղերի մանրացման 2 տեխնիկա:	կատարող կցորդիչով, 2 տելեկոպիկ ավտովերելակ, 10 խոտհնձիչ և 20 սրսկիչ տեխնիկա. <b>ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/43</b> <b>ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/45-1</b> <b>ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20-45/3</b> <b>ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/45-2</b> «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի կողմից լրացուցիչ ձեռք են բերվել 21 Mercedes-Benz SPRINTER 316 CDI ավտոմեքենա, 4Mercedes-Benz Chassis 516 CDI ֆուրգոն բեռնատար, 5 ԳԱԶ c41R13-1060 աղբատար, 140 խոտհնձիչ Կոճղերի մանրացման տեխնիկայի ձեռք բերման համար <<ԿՇՄՊ>> ՀՈԱԿ-ի կողմից հայտարարվել է մրցույթ:	12.02.2020թ. - 15.05.2020թ.  2.«Գալուպեր» ՍՊԸ 12.03.2020թ. - 05.07.2020թ.  3.Ա/Ձ Վալոդյա Նիկողոսյան 06.03.2020թ. - 19.05.2020թ  4.«ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՊ» 06.03.2020թ.- 30.05.2020թ.	
8.	Այլընտրանքային (ուղղաձիգ) կանաչապատում	Նախատեսվում է ուղղաձիգ կանաչապատման էլեմենտների օգտագործում՝ մայրաքաղաքի մի քանի վերգետնյա հետիոտնային անցումներում (Հերացի, Արշակունյաց, Բագրատունյաց) ինչպես նաև Մյասնիկյան պողոտայի գառիթափ լանջերին մագլցող թփերով թփապատում:	Մագլցող վարդերով և կուսախաղողով ուղղաձիգ կանաչապատում է իրականացվել Շիրազի փողոցի վրա գտնվող երկու վերգետնյա անցումներում:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ Հունվար-դեկտեմբեր	
9.	Շների զբոսանքի համար զբոսայգիների ստեղծում	Ներկայումս բոլոր վարչական շրջաններում քարտեզագրվել են թվով 19 զբոսայգիներ, նախատեսվում է այդ զբոսայգիներում իրականացնել զբոսայգիների ցանկապատման և կահավորման աշխատանքներ՝ միջազգային փորձին համապատասխան:	<b>ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/32</b> 2 զբոսայգիների ստեղծման նախագծա-նախահաշվային աշխատանքները ավարտվել են: Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով զբոսայգիների կառուցումը կիրականացվի հետագա տարիներին: Թվով 10 զբոսայգիների նախագծման համար հայտարարվել է մրցույթ:	«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ 03.04.2020թ.- 17.05.2020թ.	
10.	«Նոր Արաբկիր» զբոսայգու	Զբոսայգում կիրականացվի ծառերի	Զբոսայգում իրականացվել է ծառերի և	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ	

	բարեկարգում	և թփերի սանիտարական էտում, մաքրում, չորուկների հեռացում, կոճղա-շիվային վերականգնման աշխատանքներ	թփերի սանիտարական էտում, մաքրում, գույքագրվել և հատվել են չոր ծառերը: Առկա է բարեկարգման նախագիծ, որը կիրականացվի ֆինանսական միջոցների առկայության դեպքում:	Հունվար-դեկտեմբեր	
11.	«Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և ոռոգման համակարգերի գույքագրում»	Երևան քաղաքի կանաչ տարածքների և ոռոգման ցանցի գույքագրում, ԱՏՀ հենքով տվյալների բազայի ստեղծում: Երևան քաղաքի կանաչ տարածքների գույքագրման, քարտեզագրման միջով հնարավոր կլինի առավել օպերատիվ կերպով իրականացնել կանաչ տարածքների խնամքի և սպասարկման, նոր կանաչ տարածքների ստեղծման աշխատանքները	Իրականացվել է ոռոգման ցանցի արդի վիճակի վերլուծություն: Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն ՀՈԱԿ-ի Տվյալների հավաքագրման, վարման և կառավարման համակարգի ներդրման հայեցակարգի համաձայն իրականացվել են տեղագրական հանութագրման աշխատանքներ: Մասնավորապես հանութագրվել են. -Սարյան պուրակի տարածքը (1,2 հա) -Աբովյան պուրակը (0,8 հա) -Ծիծեռնակաբերդի այգին (16 հա) -Հաղթանակի այգին (2 հա) Բազայում արդեն իսկ առկա են՝ 2711 ծառ և թուփ 1410 ոռոգման համակարգի փական և ցնցուղ 1748 մ կենդանի ցանկապատ 10 465 մ ոռոգման համակարգի զծային էլեմենտ 215 000 մ <sup>2</sup> բուսական տարածք:	Բնապահպանության վարչություն «ԿՇՄՊ» ՀՈԱԿ Հունվար-դեկտեմբեր	
12.	«Աբովյանի անվան և Սարյանի անվան պուրակների վերականգնում»	Կիրականացվի Աբովյանի անվան և Սարյանի անվան պուրակների բարեկարգման, կանաչ տարածքների խնամքի, նոր ոռոգման ցանցի անցկացման աշխատանքներ	<b>ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/2</b> Աբովյանի անվան և Սարյանի անվան պուրակների բարեկարգման նախագծերը պատրաստ են, Սարյան պուրակում ավարտվել են բարեկարգման աշխատանքները:	«Մեգամետր» ՍՊԸ 24.02.2020թ.-20.11.2020թ.	
13.	Փարոսի անտառի վերականգնում	Նախատեսվում է իրականացնել Փարոսի բլրի 30 հա-ից 6 հա անտառային տարածքի տնկիների	Ուսումնասիրությամբ պարզվել է, որ հարակից տարածքների սեփականատերերը կամավորության		

		լրացման, ոռոգման, խնամքի աշխատանքներ:	սկզբունքով իրականացնում են տարածքի խնամքի, ոռոգման և կանաչապատման աշխատանքները:		
14.	Աշտարակ-Դավթաշեն նոր կառուցված ճանապարհահատվածում կանաչապատման իրականացում	Նախատեսվում է կանաչապատել Աշտարակ-Դավթաշեն նոր կառուցված ճանապարհահատվածի հարակից 4,5 հա տարածքը: Կիրականացվի Աշտարակ-Դավթաշեն նոր կառուցված ճանապարհահատվածի հարակից տարածքներում ոռոգման ցանցի անցկացման, խոտի սերմի ցանքսի, ծառաթփատեսակների, ծաղկասածիլների տնկման աշխատանքներ:	Տարածքի կանաչապատման նախագծերն ու տեխնիկական բնութագիրը պատրաստ են: Կանաչապատման աշխատանքները կիրականացվեն խորքային հորի կառուցումից հետո՝ 2021 թվականին:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ Հունվար-դեկտեմբեր	

**ԵՐԵՎԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

1.	Ծնողավարման հմտությունների ուսուցում	Աջակցության կենտրոններում, խնամակալական ընտանիքներում գտնվող երեխաների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների համար «Ծնողավարման հմտություններ» թեմայով սեմինարիների կազմակերպում և անցկացում	Չի իրականացվել	1-ին եռամսյակ	Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հաստատելու մասին ՀՀ կառավարության 16 մարտի 2020 թվականի հ. 298-Ն որոշումը, ինչպես նաև բաժնի միջոցառումների փոփոխության հնարավորությունը, նշված ծրագիրը առայժմ չի իրականացվել:
2.	Խնամատար ինստիտուտի	Խնամատարության նոր	Չի իրականացվել	2-րդ եռամսյակ	Հաշվի առնելով

	կայացում և խրախուսում	տեսակների վերաբերյալ իրազեկում, Երևան քաղաքում բնակվող խնամատար ընտանիքների խրախուսում, ընտանիքների հետ առկա խնդիրների քննարկում և լուծման տարբերակների մշակում			Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հաստատելու մասին ՀՀ կառավարության 16 մարտի 2020 թվականի հ. 298-Ն որոշումը, ինչպես նաև բաժնի միջոցառումների փոփոխության հնարավորությունը, նշված ծրագիրը առայժմ չի իրականացվել:
3.	Երեխաների ընդգրկում քաղաքային կրթամշակութային միջոցառումներին	Սոցիալական տարբեր խմբերի երեխաների թանգարաններ, թատրոններ այցելության, քաղաքային city tour-ի կազմակերպում, Երեխաների պաշտպանության օրվան, ամանորին նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպում	Չի իրականացվել	2-րդ եռամսյակ, 3-րդ եռամսյակ, 4-րդ եռամսյակ	Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հաստատելու մասին ՀՀ կառավարության 16 մարտի 2020 թվականի հ. 298-Ն որոշումը, Երևան քաղաքի ավագանու 24.06.2020թ. N 258-Ա որոշման համաձայն տեղի ունեցած կառուցվածքային փոփոխության

					արդյունքում բաժնի վերակազմավորումը, ինչպես նաև բաժնի միջոցառումների փոփոխության հնարավորությունը, նշված ծրագիրը առայժմ չի իրականացվել:
4.	Երևան քաղաքի վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների վերապատրաստում	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների համար վերապատրաստումների պարբերաբար իրականացում	Չի իրականացվել	3-րդ եռամսյակ	Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հաստատելու մասին ՀՀ կառավարության 16 մարտի 2020 թվականի հ. 298-Ն որոշումը, Երևան քաղաքի ավագանու 24.06.2020թ. N 258-Ա որոշման համաձայն տեղի ունեցած կառուցվածքային փոփոխության արդյունքում բաժնի վերակազմավորումը, ինչպես նաև բաժնի միջոցառումների փոփոխության

					հնարավորությունը, նշված ծրագիրը առայժմ չի իրականացվել:
5.	Բաժնի քանակական և որակական ցուցանիշներ	<p>1. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերում, հաշվառում, կարիքների գնահատում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնությունների տրամադրման ապահովում:</p> <p>2. Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների մուտքագրում «Մանուկ» տեղեկատվական բազայում:</p> <p>3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարիքի վկայագրում:</p> <p>4. Խնամատարության ինստիտուտի կայացմանն աջակցություն:</p> <p>5. Երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացման նպատակով որդեգրման հնարավորության մասին եզրակացության տրամադրման գործընթացի իրականացում:</p> <p>6. Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տեղավորում խնամքի և պաշտպանության հաստատություններում և այդ հաստատություններից դուրսգրում:</p> <p>7. Որդեգրման ենթակա երեխաների հաշվառում՝ անձնական քարտի</p>	<p>1. Հայտնաբերվել և հաշվառման են վերցվել առանց ծնողական խնամքի մնացած 28 երեխա, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 1 անձ, իրականացվել է կարիքների գնահատում և ուղղորդում համապատասխան կառույցներ՝ մասնագիտական աջակցություն ստանալու նպատակով:</p> <p>2. Երեխաների տվյալների շտեմարանում մուտքագրվել է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 36 երեխայի տվյալ:</p> <p>3. Հիմք ընդունելով ծնողի դիմումը և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի եզրակացությունը՝ վկայագրվել է 427 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:</p> <p>4. Խնամատարության կարգի համաձայն որպես խնամատար ծնող դառնալ ցանկացող հաշվառվել է 3 անձ, տրվել է 2 եզրակացություն երեխայի խնամքը խնամատար ընտանիքում կազմակերպելու մասին, կնքվել է Խնամատարության 9 պայմանագիր՝ Երևանի քաղաքապետի և խնամատար ծնողի, օրինական ներկայացուցչի միջև:</p> <p>5. Հիմք ընդունելով քաղաքացիների կողմից ներկայացված</p>	Տարվա ընթացքում	



		<p>լրացում, անձնական գործի կազմում և կենտրոնացված հաշվառման ներկայացում:</p> <p>8. Պետական մարմինների, միջազգային և տեղական հասարակական կառուցների և կազմակերպությունների հետ համատեղ երեխաների հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակում, համատեղ միջոցառումների իրականացում:</p> <p>9. Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների փոփոխություններ «Մանուկ» տեղեկատվական բազայում:</p> <p>10. Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող հակասոցիալական վարք դրսևորած երեխաների տեղավորում խնամքի հատուկ հաստատություններ:</p>	<p>փաստաթղթերը, և կենսապայմանների ուսումնասիրության ակտերը՝ երեխա որդեգրելու հնարավորության մասին տրվել է 19 դրական եզրակացություն, հաշվառման է վերցվել երեխա որդեգրել ցանկացող 21 անձ:</p> <p>Կազմվել և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ուղարկվել թվով 15 հարցում՝ երեխային տեսակցելու և որդեգրման հնարավորությունը պարզելու համար:</p> <p>6. Կարչական շրջաններից ստացված գրությունների, ծնողների դիմումների, ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև կենսապայմանների ուսումնասիրման արդյունքների հիման վրա 17 երեխա տեղավորվել է մանկատուն, տրվել է մանկատանից դուրսգրման մասին 10 եզրակացություն:</p> <p>7. Որդեգրման կարգի համաձայն հաշվառվել է որդեգրման ենթակա 10 երեխա:</p> <p>8. Բաժինը համագործակցել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և արդարադատության նախարարությունների համապատասխան բաժինների, Երևանի մանկատների, ՀՀ ոստիկանության ԱԳ բաժինների, «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի, ՀՕՖ-ի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի հետ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների</p>		
--	--	--	--	--	--

			<p>խնդիրների ուսումնասիրման, լուծման և կանխարգելման նպատակով:</p> <p>9. Երեխաների խմաքի հաստատություններից և ՀՀ մարզերի համանուն բաժիններից ստացված տեղեկությունների հիման վրա իրականացվել է մոտ 800 երեխաների տվյալների ճշգրտում և համալրում «Մանուկ» տեղեկատվական բազայում:</p> <p>10. ՀՀ ոստիկանությունից ստացված փաստաթղթերի հիման վրա 1 երեխայի տրվել է «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում» հաշվառված լինելու մասին տեղեկանք:</p>		
6.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում արդյունավետ կառավարման համակարգի ներդրում	<p>Երեխաների և սոցիալական պաշտպանության արդյունավետ կառավարման համակարգի ներդրման նպատակով անհրաժեշտ է՝</p> <p>1. Երևան համայնքի սոցիալական կարիքների գնահատում, վարչական շրջանների աշխատակազմերի համապատասխան բաժիններում սոցիալական աշխատողի և հոգեբանի հաստիքի ներդրում՝ Երևան համայնքի սոցիալական կարիքների գնահատման հիման վրա,</p> <p>2. Համայնքային ծառայողների, ինչպես նաև սոցիալական աշխատողների մասնագիտական վերապատրաստումների իրականացում, շարունակական</p>	<p>1. Վարչության կողմից 2020 թվականի համար նախատեսված ծրագրերը ամբողջությամբ հնարավոր չի եղել իրագործել, երկրում ստեղծված արտակարգ դրության (հիմք՝ ՀՀ Կառավարության N-298-Ն որոշում, ընդունված՝ 16 մարտի 2020թ), ինչպես նաև պատերազմական իրավիճակի պատճառով: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ տարվա ընթացքում վարչության կողմից իրականացվել են այլ մեծածավալ աշխատանքներ՝ ըստ անհրաժեշտության:</p> <p>2020 թվականի ընթացքում Երեխաների և սոցիալական պաշտպանության արդյունավետ կառավարման համակարգի ներդրման նպատակով իրականացվող աշխատանքների 1-ին փուլի արդյունքում ՀՀ Երևան քաղաքի ավագանու կողմից 2020թ. հունիսի 24-</p>		

		<p>իրագրելու մենթի կազմակերպում,</p> <p>3. Տեղական սոցիալական պլանավորման, ինչպես նաև տեղական սոցիալական ծրագրերի ընթացակարգերի և գործիքակազմի մշակում և տեղայնացում՝ ներառյալ ֆինանսավորման մեխանիզմներ,</p> <p>4. Համակարգի աշխատանքների արդյունավետ կառավարման համար համակարգի թվայնացման նպատակով՝ տեխնիկական բնութագրի մշակում,</p> <p>5. Համայնքի, ինչպես նաև այլ կազմակերպությունների կողմից իրականացված սոցիալական ծառայությունների մոնիթորինգի և գնահատման գործառույթների մեխանիզմների մշակում,</p> <p>6. Ծառայությունների պատվիրակման ընթացակարգի մշակում և տեղայնացում,</p> <p>7. Սոցիալական աշխատանքի սուպերվիզիայի մեխանիզմների մշակում, համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով,</p> <p>8. Երևան համայնքում սոցիալական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների քարտեզագրում,</p> <p>9. Երևան համայնքի երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների, ինչպես նաև աշխատանքների</p>	<p>ին հաստատվել է N 258-Ս որոշումը՝ համաձայն որի ստեղծվել է «Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն»-ը:</p> <p>2-րդ փուլով նախատեսվում է 12 վարչական շրջանների համապատասխան բաժինների փոփոխություններ, որոնք կնպաստեն համայնքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում արդյունավետ կառավարման համակարգի ներդրման աշխատանքներին, համայնքում ընտանիքների ամրապնդմանը և երեխաների պաշտպանության ապահովմանը:</p> <p>UNICEF-ի հետ համատեղ իրականացված հետազոտության արդյունքում նոր համակարգի ներդրման նպատակով Երևանի քաղաքապետի 2020թ. օգոստոսի 25-ի հ. 2593-Ս որոշմամբ ստեղծվել է «Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն», որտեղ ներդրվել է իրավաբանի հոգեբանի և սոցիալական աշխատողի հաստիքներ, գործարկվել է սուպերվիզիայի մեխանիզմը:</p> <p>Տարվա ընթացքում կազմակերպվել է հանդիպում-քննարկումներ և աշխատաժողովներ վարչական շրջանների սոց. բաժինների և 12 ՄՍՏ-ների պետերի հետ:</p> <p>Ներկայացվել են 2021թվականին տարեկան բյուջեով նախատեսվող ծրագրերի կազմակերպման իրականացման ընթացակարգերը և</p>		
--	--	---	---	--	--

		<p>արդյունավետության բարձրացմանը աշխատաժողովների կազմակերպում</p> <p>միտված</p>	<p>մեխանիզմները:          2021թ.ին տեղական սոցիալական ծրագրերի ընթացակարգերի և գործիքակազմի մշակման և տեղայնացման (ներառում է նաև 6-րդ կետում նշված աշխատանքները) նպատակով 2020թ-ի ընթացքում UNICEF-ի հետ համատեղ իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ:          Իրականացված և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ շնորհանդեսի շրջանակներում ամփոփ տեղեկատվություն է ներկայացվել ավագանու անդամներին, որը մեկնաբանվել է հեռուստատեսությամբ և համացանցով:          Երևան քաղաքի սոցիալական կարիքների գնահատման նպատակով 2020թ. դեկտեմբեր ամսին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հետ կազմակերպվել է հանդիպումներ և աշխատաժողովներ Երևանի 12 ՍՍՏԲ-ների 66 մասնագետների հետ:          Աշխատանքները շարունակական բնույթ է կրում և նախատեսվում է ավարտել 2021թ.-ին:          Աշխատակիցների կողմից իրականացվել են արտակարգ իրավիճակային /պայմանավորված նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման դեպքերի կանխարգելմամբ ինչպես նաև</p>		
--	--	---	--	--	--

			<p>աղբբեջանի կողմից սանձազերծված լայնամաշտաբ պատերազմի պայմաններում սոցիալապես անապահով ընտանիքներում /57 աշխատակիցների կողմից 10 օրվա ընթացքում/ իրականացվել է 1078/ առաջնային կարիքի գնահատում:</p> <p>Քննարկվել են իրականացման ընթացակարգերը և մեխանիզմները:</p> <p>Տարվա ընթացքում «Յունիսեֆ» կազմակերպության հետ մեկտեղ իրականացվել են տեղական սոցիալական ծրագրերի պլանավորման, վերջիններիս ընթացակարգերի և գործիքակազմի մշակման, ինչպես նաև դրանց ֆինանսավորման մեխանիզմների ընթացակարգի մշակման գործընթացին ուղղված աշխատանքները:</p> <p>Երևան քաղաքի ավագանու 24.11.2020թ. հ. 291-ն որոշման համաձայն շուրջ 550 սոցիալապես անապահով ընտանիքներին անվճար հատկացվել է ձմեռային վառելափայտ:</p> <p>Վառելափայտ ստացողների սոցիալապես անապահով ընտանիքների ցուցակները, ինչպես նաև վարչության կողմից մշակված չափորոշիչները, տրամադրվել են աշխատակազմի բնապահպանության վարչությանը:</p> <p>Երևանի քաղաքապետարանի կողմից Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ ձեռք է բերվել Երևանի պատանի հանդիսատեսի,</p>		
--	--	--	---	--	--

			<p>Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոնների շուրջ 5000 տոմս, որոնք տրամադրվել են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների /բազմազավակ 4 և ավելի, միակողմանի և երկողմանի ծնողագուրկ երեխաների, խնամատար ընտանիքների երեխաներին, ինչպես նաև շուրջօրյա ժամանակավոր խնամքի, ցերեկային խնամքի կենտրոնների երեխաներին, ինչպես նաև արցախցի երեխաներին/:</p> <p>Համագործակցության շրջանակներում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կողմից շուրջ 1200 հրավիրատոմս է տրամադրվել արցախցի ընտանիքների երեխաներին:</p> <p>«Յունիսեֆ» կազմակերպության հետ համատեղ շուրջ 1000 երեխաների տրամադրվել է տոնական նվերներ:</p>		
7.	Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրեր	<p>1.Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղությամբ նպատակային ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ է՝</p> <p>1.1 Սոցիալական աջակցության ձևերի ընդլայնում՝ զարգացնելով անհրաժեշտ ծառայությունները և ոչ դրամական աջակցությունը: Սոցիալական աջակցության ծառայությունները պետք է խթանեն անապահով ընտանիքների կարողությունների զարգացումը՝ նրանց ինքնաբավ դարձնելուն ուղղված և արժանապատիվ ու</p>	<p>Հաշվի առնելով 16.03.2020 թվականին Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությունը՝ պայմանավորված նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման դեպքերի կանխարգելմամբ, վարչության կողմից հանձնարարվել է ՄՍՏԲ-ներին և վարչական շրջանների սոցիալական բաժիններին իրականացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտված անձանց կարիքի գնահատում: Գնահատված կարիքների հիման վրա կազմվել է արձանագրություն, որի մեթոդաբանության խնդիրների հետ</p>		

		<p>սեփական վաստակ ունեցող ընտանիք ձևավորելու համար,</p> <p>1.2. Իրականացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքի կարիքների գնահատում</p> <p>1.3. Անհատական սոցիալական ծրագրերի մշակում</p> <p>1.4. Տեղական սոցիալական ծրագրերի մշակում և իրականացում</p> <p>1.5 Վերը նշված երկու կետերը ապահովելու նպատակով ծառայությունների պատվիրակում, ինչպես նաև կամավոր լիազորությունների շրջանակում ավագանու հաստատած կարգի համաձայն աջակցության տրամադրում,</p> <p>2. Ելնելով հասարակության սոցիալական բևեռացվածության և աղքատության մեղմացման, ինչպես նաև յանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներից ոչ ոքի չանտեսելու սկզբունքներից՝ նախատեսվում է իրականացնել միջոցառումներ տոնական և հիշատակի օրերին:</p>	<p>կապված աշխատանքները դեռևս շարունակվում են:</p> <p>Գործընթացը վարչական շրջանների և ՍՄՏԲ-ների կողմից իրականացվել է հետևյալ փուլերով՝</p> <p>Ստացված տեղեկատվությունը (առցանց, թեժ գիծ, դիմում) ստուգվել է առկա բազայում</p> <p>ապա կատարվել է հեռախոսազրույց ՍՄՏԲ-ի սոցիալական աշխատողի և վարչական շրջանի մասնագետի կողմից, որի ընթացքում կատարված կարիքի գնահատման վերաբերյալ տեղեկությունը արձանագրության տեսքով ներկայացվել է վարչություն:</p> <p>Արձանագրությունը կազմվել է հետևյալ ձևաչափով՝</p> <p>Ներածական մասը ներառել է բնակչի հետ զրույց-ուսումնասիրության ընթացքում հայտնի դարձած փաստերը:</p> <p>Վերջինիս արդյունքում տրվել է եզրահանգում և դիրքորոշում:</p> <p>Կազմված արձանագրությունների հիման վրա կատարվել է տվյալների հավաքագրում և հետագա աջակցման աշխատանքները իրականացվել է Երևան համայնքի բյուջեով կամ այլ կազմակերպությունների, անհատների կողմից տրամադրված աջակցությամբ:</p> <p>Տոնական և հիշատակի օրերին իրականացվող միջոցառումներից օգտվողների համար կազմակերպված աշխատաժողովում քննարկվել է չափորոշիչներ մշակելու կարգը ժամանակացույցը և իրականացման ընթացակարգը, որոնք միտված են</p>		
--	--	---	---	--	--

			<p>լինելու համայնքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներին ոչ ոքի չանտեսելու սկզբունքի պահպանմանը, նրանց արժևորմանը:</p>		
8.	<p>Համագործակցության շրջանակներում սոցիալական գործընկերություն և ձեռներեցություն</p>	<p>Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքների հետ աշխատող սոցիալական աշխատողների կողմից կարիքների գնահատման արդյունքում ներկայացվում են այն ընտանիքները, որոնք ցանկություն ունեն զբաղվել ընտանեկան ձեռնարկատիրությամբ, իրականացնել ծառայությունների մատուցում կամ սպասարկում: Այս ամենը միտված է լինելու անհատական զարգացմանը, կարիերայի պլանավորմանն ու կառավարմանը, ձեռնարկատիրական գործունեության ապահովմանը: Տվյալ շահառու խմբի հետ անհատական աշխատանքի արդյունքում նրանց առաջարկվում է տարբեր ծրագրեր՝ հաշվի առնելով մարդու պահանջմունքների փոփոխման և կարիքների բավարարման բնականոն գործընթացը: Այն իր մեջ ներառում է երկաստիճան զարգացման գաղափարը: Առաջին աստիճանը ենթադրում է շահառու խմբերի առանձնահատկությունների քարտեզագրում, կարողությունների մակարդակի գնահատում,</p>	<p>Հայաստանում կին ձեռնարկատերերի գործունեության խթանմանն և զարգացմանն ուղղված ծրագրի շրջանակներում համագործակցության վերաբերյալ կազմակերպվել է հանդիպում հետազոտության շրջանակում ծրագիրը իրականացնող պատասխանատու անձանց հետ: «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ- պատասխանատուների հանդիպման ժամանակ ձեռք է բերվել պայմանավորվածություն կազմակերպության կողմից ծրագիրը ներկայացնելուց հետո քննարկել հետագա համագործակցությունը: Զբաղվածության խթանման նպատակով, մասնավորապես սոցիալական ձեռներեցությունը զարգացնելու համար նախատեսվել է բարեգործական կազմակերպությունների հետ պիլոտային ծրագրի իրականացում, որի շրջանակներում իրականացվել են քննարկումներ «Ապագա» հիմնադրամի հետ, որի արդյունքում ՍՍՏԲ-ների հետ համատեղ ընտրվել են 8 ընտանիքներ (2 ընտանիք ևս պետք է ընդգրվեին ծրագրում), իրականացվել է նշված ընտանիքների կարիքների գնահատում, ինչպես նաև ՍՍՏԲ-ի սոցիալական աշխատողների, հիմնադրամի և Երևանի</p>		



		<p>կրթության և/կամ վերապատրաստման անհրաժեշտության արձանագրում և դրա արդյունքում զբաղվածության խնդրի լուծում: Երկրորդ աստիճանը ենթադրում է շահառուների ձեռներացության հմտությունների զարգացում, ոլորտային ունակությունների բացահայտում, բիզնես գաղափարի գեներացմանն ու բիզնես մոդելի մշակմանն աջակցություն, ինքնազբաղվածության և/կամ ընտանեկան ձեռնարկության հիմնմանն ու զարգացմանն աջակցություն: Վերոնշյալ երկաստիճան ծրագրերը կօգնեն աղքատությունը փոխակերպել տնտեսական զարգացման: Կարևոր պայման է լինելու, որ գործունեության ընթացքում բոլոր այս փուլերի տրամաբանական կապը պահպանվի, և հիմքում դրված լինի շարունակականության և կենսունակության ապահովումը</p>	<p>քաղաքապետարանի ներկայացուցիչների հետ համատեղ կատարվել են տունայցեր: Սակայն աշխատանքներն ավարտին չեն հասցվել կորոնավիրուսային համաճարակի և երկրում ստեղծված պատերազմական դրության պատճառով: Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով Հայաստանի Հանրապետությունում հասարակության և խոցելի խմբերի հոգեկան առողջության պահպանման, վերականգնման և բարելավման խնդիրների լուծման նպատակով հայկական հոգեբուժական ասոցիացիան շարունակական համագործակցում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և քաղաքապետարանների և այլ գերատեսչությունների հետ:</p>		
9.	Սոցիալական ծառայությունների տրամադրում և պատվիրակում	<p>Ծառայությունների տրամադրումը կիրականցվի բացառապես ծառայությունները մատուցող կազմակերպությունների հետ մրցակցային սկզբունքով, համապատասխան մրցութային կարգով՝ տեղական սոցիալական ծրագրերի և կարիքների գնահատման հիման վրա ու պատվիրակման միջոցով: 1. Աուտիզմ ունեցող դեռահասների և երիտասարդների համար</p>	<p>«Ամբրա» հոգեկան բարեկեցության կենտրոն ՀԿ-ն, Բաց հասարակության հիմնադրամներ Հայաստանի գրասենյակի ինչպես նաև ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ իրականացրել է «Կյանքի հավասար պայմաններ բոլորի համար» ծրագիրը: Ծրագրում նախատեսված էր Երևան համայնքից շուրջ 50 քաղաքացիների ՀՀ ԱՍՀՆ-ում խնամքի հաստատությունում գրանցվելու</p>		

		<p>ցերեկային կենտրոն:</p> <p>2. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցության ցերեկային կենտրոն:</p> <p>3. Մտավոր և հոգեկան խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային սոցիալ-վերականգնողական ծառայություններ:</p> <p>4. Տեսողական խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում:</p> <p>5.Տնային պայմաններում խնամքի ծառայություններ տարեցներին:</p> <p>6. Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ:</p> <p>7. Տարեցների շուրջօրյա խնամք (փոքր տներ):</p> <p>8. Անօթևան մարդկանց համար գիշերակաց տներ:</p> <p>9. Շուրջօրյա խնամքի ծառայություններ մտավոր խնդիրներ ունեցող անձնանց համար:</p> <p>10. Շուրջօրյա խնամքի ծառայություններ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար:</p> <p>11. Տնային խնամքի ծառայություններ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար:</p> <p>12. Կարիքի գնահատման արդյունքում սոցիալական աջակցության և ծառայությունների տրամադրում (ուղղորդում,</p>	<p>համար հերթագրված անձանց կարիքի գնահատում:</p> <p>Վերը նշված կառույցների հետ համագործակցության շրջանակում վարչության և Երևանի ՄՍՏԲ-ների աշխատակիցների կողմից վերլուծվել և հասցեավորվել են 50 քաղաքացիներից 20-ը:</p> <p>Արթմեդ բժշկական կենտրոնի «Սթրես» բաժանմունքում, իրականացվել են հերթագրված քաղաքացիների հոգեկան առողջության և հոգեսոցիալական կարիքների գնահատումը:</p> <p>Հոկտեմբեր–դեկտեմբեր ամիսների ընթացքում «Հոգեբանական աջակցություն գոհված զինծառայողների ընտանիքներին» հասարակական նախաձեռնության շրջանակում համագործակցություն է իրականացվել վարչական շրջանների համապատասխան բաժինների հետ. նրանց տրամադրել են ընտանիքների կոնտակտային տվյալները:</p> <p>«Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամին, որտեղ ներկայումս ապրում են շուրջ 100 անօթևաններ, հունվար-հուլիս ամիսներին Երևան համայնքի բյուջեից /կոմունալ ծառայությունների փոխհատուցման նպատակով տրամադրվել է դրամական աջակցություն՝ 28.02.2020թ. «Նվիրատվության պայմանագիր Կ-8»-ով:</p> <p>՝03.04.2020թ.«Նվիրատվության պայմանագիր Կ-9»-ով: 21.05.2020թ.</p>		
--	--	---	--	--	--

		խորհրդատվության տրամադրում, օգնականի և այլ ծառայություններ): Որակյալ և հասանելի ծառայությունների մատուցում (շուրջ 2500 շահառու):	«Նվիրատվության պայմանագիր Կ-10»ով և 19.06.2020թ. «Նվիրատվության պայմանագիր Կ-11»ով: 31.07.2020թ. «Նվիրատվության պայմանագիր Կ-12»ով և 19.08.2020թ. «Նվիրատվության պայմանագիր Կ-13»ով: Համագործակցության շրջանակներում «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամին ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունից «Աջակցություն Հայաստանին նախաձեռնության» թիվ ASI020 պայմանագրով տրամադրվել է տեխնիկական աջակցություն /պահարաններ, ծածկոցներ, վերակներ, գազի սալօջախ, համակարգիչներ, «65» հեռուստացույց և այլն/:		
10.	Բազմազավակ, երիտասարդ, և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն	Բազմազավակ ընտանիքներին աջակցության ծրագրերի մշակում և իրականացում: 2. Վերը նշված ընտանիքներին աջակցության նպատակով վերապատրաստումների իրականացում (տնտեսավարում, ծնողավարության հմտություններ և այլն): 3. Վերը նշված ընտանիքներին աջակցության նպատակով վերապատրաստումների իրականացում (տնտեսավարում, ծնողավարության հմտություններ և այլն): 4. Համապատասխան կարիքների առկայության դեպքում ավագանու	Երևան քաղաքում կամավոր խնդիրների լուծման նպատակով մշակվել է Հայաստանի Հանրապետության Երևան համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների, այդ լիազորությունների իրականացման և չափորոշիչները սահմանելու են 24.06.2020թ. Բազմազավակ ընտանիքների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց համար համապատասխան չափորոշիչներ մշակելու նպատակով տարվա ընթացքում իրականացվել են		

		կողմից հաստատված կարգի համաձայն համայնքի կամավոր լիազորությունների շրջանակում: Ժողովրդագրական իրավիճակի բարելավում (շուրջ 500 ընտանիք):	նախապատրաստական աշխատանքներ:		
11.	Հայրենադարձ և փախստական ընտանիքների համար աջակցության ծրագրեր	<p>Հայրենադարձ ընտանիքներին բնակարանների վարձակալության մասնակի փոխահատուցում:</p> <p>2. Փախստական ընտանիքների կարիքի գնահատման արդյունքում սոցիալական ծառայությունների տրամադրում:</p> <p>3. Փախստական ընտանիքներին ձմռան ամիսներին առաջացած խնդիրների լուծման նպատակով՝ կոմունալ վարձավճարների մասնակի փոխահատուցում:</p> <p>4. Համապատասխան կարիքների առկայության դեպքում ավագանու կողմից հաստատված կարգի համաձայն համայնքի կամավոր լիազորությունների շրջանակում սոցիալական աջակցության տրամադրում:</p> <p>ԿԴԻՀ-ում հայրենադարձ և փախստական ընտանիքներ (շուրջ 1500 ընտանիք):</p>	<p>Համագործակցության շրջանակում ՄԱԿ-ի հետ իրականացվել է քննարկումներ՝ ուղղված հայրենադարձ և փախստական ընտանիքների համար աջակցության ծրագրերի տրամադրմանը:</p> <p>Փախստականների սոցիալական, տնտեսական ինտեգրման նկատառումով քաղաքապետարանը ակտիվ համագործակցել է ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի և «Առաքելություն Հայաստան», կազմակերպության հետ:</p> <p>Քննարկման ժամանակ բարձրացվել են մի շարք հարցեր ուղղված հայրենադարձ և փախստական ընտանիքների համար աջակցության ծրագրերի տրամադրմանը, ինչպես նաև ՀՀ ու փախստականի կարգավիճակ ստացած անձանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:</p>		
12.	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում աջակցություն (շահառուների թիվը ըստ իրավիճակի):	Հիմք ընդունելով 16.03.2020 թվականին Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությունը պայմանավորված նոր կորոնավիրուսային հիվանդության տարածման դեպքերի կանխարգելմամբ, 2020թ. ընթացքում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝		

			<p>Թիրախավորվել են անհետաձգելի սոցիալական աջակցության կարիք ունեցող խմբերը:</p> <p>Երկրում արտակարգ դրություն հայտարարելուց հետո՝ բոլոր 12 վարչական շրջաններում հավաքագրվել և շուրջ 756 խոցելի (բազմազավակ, բազմանդամ, հաշմանդամություն ունեցող ընտանիքներ, միայնակ անժառանգներ, թոշակառուներ:) ընտանիքների տրամադրվել է այդ պահին մանկապարտեզներում առկա, պիտանելիության ժամկետում գտնվող սնունդ:</p> <p>Շահառուների ցուցակների համակարգման գործընթացը հաջորդել է երկրում արտակարգ դրություն հայտարարելուն, որի արդյունքում Կ87 խմբում (միայնակ անժառանգ տարեց թոշակառուներ) ներառվել է շուրջ 4000 շահառու: Երևան համայնքի բյուջեից շուրջ 3550 անժառանգ թոշակառուների տրամադրվել են բնափրային փաթեթ: Բնափրային փաթեթների, ինչպես նաև շահառուների ցանկը համաձայնեցվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, նոր կորոնավիրուսով պայմանավորված աշխատանքների համակարգման շտաբի հետ:</p> <p>Աջակցության տրամադրման գործընթացը կազմակերպվել է փուլերով: Փաթեթների տրամադրման առաջնահերթության առաջին խմբում ընդգրկվել են միայնակ անժառանգ</p>		
--	--	--	---	--	--

			<p>կենսաթոշակառուներ (անժառանգ թոշակառուներից կազմված ընտանիք)՝ Կ87:</p> <p>ՍՍՏԲ-ների միջոցով հստակեցվել է ցուցակներում ներառված անձանց տվյալ հասցեում փաստացի բնակվելու հանգամանքը, ինչպես նաև իրականացվել է համադրում տարբեր կազմակերպությունների կողմից բնաիրային փաթեթներ տրամադրված ցուցակների և ՍՍՏԲ-ների ցուցակներով՝ հնարավոր կրկնություններից խուսափելու համար: Համադրումից հետո յուրաքանչյուր վարչական շրջանի տրվել է համապատասխան ցուցակները, որոնց հիման վրա կատարվել է փաթեթների բաշխումը: Բաշխման գործընթացի կազմակերպումը իրականացվել է վարչական շրջանների աշխատակցիների (կամավորների) կողմից՝ ղեկավարների անմիջական հսկողությամբ:</p> <p>Աշխատանքների կազմակերպման ընթացքը համաձայնացվել է պարետատան ցուցումներին համապատասխան:</p> <p>Համագործակցության արդյունքում տարբեր ռիսկային խմբերի աջակցություն է տրամադրվել նաև հետևյալ կազմակերպությունների կողմից՝</p> <p>«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ  «World Vision» միջազգային բարեգործական կազմակերպություն  Գերմանական կարմիր խաչ</p>		
--	--	--	--	--	--

			<p>Հայկական կարմիր խաչ «Հայ» ասոցիացիան՝ «Հայ տարեց» ծրագրով Տարբեր բարերաներ: և այլ հկ-ներ Երկրում արտակարգ դրություն հայտարարելուց հետո՝ բոլոր 12 վարչական շրջաններում հավաքագրվել և շուրջ 13 հկ-ների և մի շարք բարերարների աջակցությամբ բնախրային փաթեթներ են տրամադրվել տարբեր ռիսկային խմբերում գտնվող սոցիալական աջակցության կարիք ունեցող շուրջ 25.000 անձանց/ ընտանիքների: Տարվա ընթացքում «Աջակցություն անձը հաստատող փաստաթուղթ չունեցող անձանց և քաղաքացիությունը կորցնելու վտանգի տակ գտնվող անձանց բացահայտմանը» ծրագրի շրջանակներում ստեղծված աշխատանքային խմբի հետ համագործակցության շրջանակում կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ, առցանց Skype-ի միջոցով: Ծրագրի նպատակն է աշխատանքային խմբի հանդիպումների ընթացքում քննարկել շահառուների փաստաթղթավորման հետ կապված բարդ խնդիրները: Կատարվել է նաև վիրավոր զինծառայողների շուրջ 440 ընտանիքների կարիքի գնահատում և ըստ անհրաժեշտության նրանց տրամադրել սոցիալական աջակցություններ:</p>		
--	--	--	---	--	--

			<p>Աղբբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով տուժած արցախի հանրապետությունից տեղահանված շուրջ 26.000 ընտ./106.000 անձ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունից առաջնագիծ մեկնած, վիրավորում ստացածների, զոհվածների, մասնակիցների, գերիների և անհետ կորածների, սոցիալապես անապահով շուրջ 1154 ընտ./ 4711 անձ տրամադրվել է բնափրային աջակցություններ /սնունդ, հագուստ, հիգենայի պարագաներ, ծալովի մահճակալ, տակդիրներ, ներքնակներ և այլն/:</p> <p>Երևանի չորս վարչական շրջաններում /Շենգավիթ, Նոր Նորք, Էրեբունի և Մալաթիա-Սեբաստիա/ բնակվող և արցախյան պատերազմի արդյունքում վիրավորում ստացած կամ զոհված անձանց, ինչպես նաև տեղահանված /շուրջ 260/ ընտանիքների համագործակցության շրջանակում Հայկական Կարիտաս հասարակական կազմակերպությանը, կողմից հատկացվել են պարենային և ոչ պարենային փաթեթներ:</p> <p>ՄԱԿ-ի համաշխարհային պարենի ծրագրի երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվել է Երևան քաղաքում 22782 շահառուների պարենային օգնության տրամադրման ծրագիր: Ծրագրի շրջանակներում կիրականացվեն պարենի բաշխումները՝ 1-ին փուլով 10.838 անձանց, իսկ 2-րդ փուլով 11.944 անձանց (որն իրականացվելու է 2021</p>		
--	--	--	---	--	--



			<p>թվականին):</p> <p>ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 01.11.2020 թվականի N2-2/60485-2020 գրության համաձայն բաշխման գործընթացի կազմակերպումը իրականացվում է ՍԱՏԲ-ների միջոցով, վարչական շրջանների աշխատակցիների աջակցությամբ և վարչական շրջանների ղեկավարների անմիջական հսկողության ներքո:</p>		
13.	Պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում ինտեգրված սոցիալական ծառայությունների կազմակերպում և իրականացում	<p>1. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրագործում`</p> <p>1.1 կարիքավոր բնակչության հայտնաբերման, հաշվառման, ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով անձի (ընտանիքի) սոցիալական կարիքների գնահատման, սոցիալական գործի կազմման (այդ թվում և էլեկտրոնային եղանակով), պետական նպաստների նշանակման կազմակերպում և իրականացում,</p> <p>1.2 սոցիալական պաշտպանության ոլորտում անձի իրավունքների և դրանց իրականացման, սոցիալական աջակցության շրջանակներում տրամադրվող ծառայությունների մատուցում,</p> <p>1.3 բազմամասնագիտական աշխատանքային խմբերի (աջակցող ցանցի) համագործակցությամբ սոցիալական դեպքի վարման գործընթացի կազմակերպման,</p>	<p>2020թ. կազմակերպվել է ՍԱՏԲ-ների գործունեությունը, մասնավորապես՝ կարիքավոր բնակչության հաշվառման, պետական նպաստների և ավանդների դիմաց փոխհատուցումների նշանակման գործընթացը, ինչպես նաև դրանց վճարումը:</p> <p>ՍԱՏԲ-ների կողմից փաստագրվել են շուրջ 16591 կարիքավոր ընտանիքներ, իսկ միջին հաշվով՝ շուրջ 13616 ընտանիքներ ստացել են ընտանեկան, սոցիալական նպաստներ, իսկ 2406 ընտանիքներ՝ հրատապ օգնություններ:</p> <p>Եռամսյակի ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացվել են տարբեր գերատեսչությունների համադրման շուրջ 142 ցուցակներ, որոնք համադրվել են ԱԳՀ-ում հաշվառված ընտանիքների տվյալների հետ, ամփոփվել և համապատասխան գրությամբ տրամադրվել են վերը նշված նախարարությանը:</p> <p>Համադրումների արդյունքում ոչ</p>		

		<p>տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհուրդների գործունեության ապահովում:</p> <p>2. Սոցիալական ոլորտում բարեփոխումների արդյունքում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման աջակցություն:</p> <p>Սոցիալական, ընտանեկան նպաստի, հրատապ օգնության տրամադրում, ինչպես նաև սոցիալական դեպքի վարում (միջինը 17.000 շահառու):</p>	<p>հավաստի տեղեկությունների հիման վրա նշանակված նպաստներից եռամսյակի ընթացքում կասեցվել է, իսկ ավելի վճարված գումարները վերադարձվել են ՀՀ պետական բյուջե:</p> <p>Տարվա ընթացքում ամփոփվել են հունվար-դեկտեմբեր ամիսներին ՍՍՏԲ-ների կողմից նշանակված և վճարված պետական նպաստների վերաբերյալ փոխադարձ ակտերը՝ համաձայնեցված «Հայփոստ ՓԲԸ-ի հետ» :</p> <p>Բացի այդ Երևան քաղաքի սոցիալական աջակցության տարածքային բաժինների հետ իրականացվել են ԱԳՀ-ում հաշվառված՝ ընտանեկան, սոցիալական նպաստ ստացող ընտանիքների նույնականացման քարտերի ձեռքբերումն ապահովելու ուղղությամբ մի շարք աշխատանքներ և ամփոփ տեղեկատվությունը /շուրջ 836 ընտանիքների/ ներկայացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն :</p> <p>2020 թվականի հունվար- փետրվար ամիսներին <a href="http://www.yerevan.am">www.yerevan.am</a> կայքում թարմացվել է Երևան համայնքի աջակցող ցանցի կազմը, որի արդյունքում վերջնական թիվը կազմել է շուրջ 207 անձ: Վերջինիս նպատակն է՝ Երևան համայնքում սոցիալական ծրագրերի իրականացման ընթացքում սոցիալական ծառայություններ տրամադրող մարմինների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց միջև</p>		
--	--	---	---	--	--

			<p>արդյունավետ և հասանելի համագործակցություն ապահովելը: Երևանի քաղաքապետի 26.02.2020թ. հ. 655-Ա որոշմամբ ձևավորվել է «Տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն համակարգող խորհուրդների անհատական կազմերը» 122 անձով: Տարվա ընթացքում Երևանի Աջափնյակ, Էրեբունի, Շենգավիթի և Նուբարաշեն, Քանաքեռ-Զեյթուն, Մալաթիա-Սեբաստիա և Նոր Նորք ՍՍՏԲ-ներում կապված խնդրահարույց դեպքերի հետ բազմամասնագիտական խմբերի հետ իրականացվել են մի շարք աշխատանքային քննարկումներ և տրվել են անհրաժեշտ մեթոդական օգնություններ (մարտ-մայիս ամիսների ընթացքում վերոգրյալ կազմակերպությունների միջև աշխատանքերը կազմակերպվել և իրականացվել են հեռավար կերպով՝ պայմանավորված երկրում ստեղծված արտակարգ դրությամբ):</p> <p>Բացի այդ, Երևանի ՍՍՏԲ-ների հետ մշտադիտարկման շրջանակներում տարվա տնթացքում ամփոփվել են թվով շուրջ 210 ընտանիքների սոցիալական դեպքի վարման գործընթացներ, որից ընտանիքի ընթացիկ /կարիքի գնահատում, կարիքի բացահայտում/ միջամտություն շուրջ 157 իսկ փակված ընտանիքների դեպքերը շուրջ 53:</p>		
--	--	--	---	--	--

**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ**

1.	<p>Երևան քաղաքի զբոսաշրջային բրենդի մշակմանն ուղղված աշխատանքների իրականացում</p>	<p>Ծրագիրը հնարավորություն կտա շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ ձևավորել Երևանի՝ որպես կազմակերպված հանգստի, զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ քաղաքի նկարագիր և ճանաչելի դարձնել Երևանը միջազգային զբոսաշրջային շուկայում:</p>	<p>Իրականացվել են մի շարք քաղաքների զբոսաշրջային բրենդների համացանցային և ստացված առաջարկների ուսումնասիրություններ:</p>	<p>Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն 2020 թ. հունվար -դեկտեմբեր</p>	
2.	<p>Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացում զբոսաշրջության ոլորտում</p>	<p>Տարաբնույթ միջոցառումների մշակում և իրականացում մի շարք քույր և գործընկեր քաղաքների հետ, մասնավորապես գործարար հանդիպումների, ճանաչողական այցերի, փորձի փոխանակման, սեմինարների, կոնֆերանսների, կլոր-սեղանների կազմակերպում՝ պետական և մասնավոր շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ:</p>	<p>COVID-19-ը նոր տիպի կորոնավիրուսի համավարակով պայմանավորված զբոսաշրջության ոլորտում միջազգային համագործակցությունն իրականացվել է առցանց համակարգով: Ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ առցանց զբոսաշրջությունը խթանելու նպատակով Երևան քաղաքի քույր և գործընկեր քաղաքների նախաձեռնությամբ իրականացվել է խաչաձև մարքեթինգային (cross-promotion) նախագիծ: Այս նախագծի փոխադարձ պայմանավորվածության համաձայն՝ Երևանի քույր քաղաքների, մասնավորապես, Կիևի, Օդեսայի (<a href="https://odessa-journal.com">https://odessa-journal.com</a>) և Սանկտ Պետերբուրգի պաշտոնական սոցիալական հարթակներում, զբոսաշրջային հավելվածներում, առցանց պարբերականներում ներկայացվել է Երևան քաղաքի տեսարժան վայրերի գրավչությունն ու զբոսաշրջային ներուժը, և համապատասխանաբար, Երևան քաղաքի զբոսաշրջային</p>	<p>Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն 2020 թ. ապրիլ-դեկտեմբեր</p>	

			<p>տեղեկատվական և քաղաքացիների սպասարկման կենտրոնի ֆեյսբուքյան կայքէջում (<a href="#">Yerevan Tourism Information and Support Center</a>) ներկայացվել է վերոնշյալ քաղաքների զբոսաշրջային ներուժը:</p> <p>Երևան քաղաքի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի ֆեյսբուքյան էջում հրապարակվել են Հայաստանում և արտերկրում գործող զբոսաշրջային և մշակութային կառույցների վիրտուալ շրջայցեր, ինչպես նաև Երևանի քույր և գործընկեր ավելի քան 50 քաղաքների զբոսաշրջային ներուժի վերաբերյալ տեղեկատվություն:</p> <p>2020թ. սեպտեմբերին տուրիզմի բաժինը մասնակցել է «Քաղաքների զբոսաշրջության համաշխարհային ֆեդերացիայի» (WTCF) առցանց համաժողովին՝ «Զբոսաշրջության համագործակցություն և զարգացում» թեմայով: Երևանը միջազգային կառույցին անդամակցում է 2018 թվականից: 2020 թ. դեկտեմբերին տուրիզմի բաժինը մասնակցել է «Քաղաքների զբոսաշրջության համաշխարհային ֆեդերացիայի» (WTCF) կողմից կազմակերպված «Զբոսաշրջության առավելությունները» խորագրով վեբինարին Zoom առցանց հարթակում, որն ուղղված էր զբոսաշրջության ոլորտի խթանմանը:</p>		
3.	Երևանում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ	«Երևան Միթի Տուր» քաղաքային զբոսաշրջային պաշտոնական էրթուղու կատարելագործում ու	COVID-19-ը նոր տիպի կորոնավիրուսի համավարակով պայմանավորված 2020 թ. «Երևան	Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն	

	<p>ծրագրերի իրականացում</p>	<p>արդիականացում, որը մեծ հետաքրքրություն է առաջացնում ինչպես մայրաքաղաքի հյուրերի, այնպես էլ բնակիչների շրջանում: Իրականացվելու են տոն և հիշատակի օրերին նվիրված (ինչպես նաև առանձին դեպքերում) անվճար ակցիաներ՝ մասնակից դարձնելով երեխաներին, սոցիալապես անապահով խավերին և հաշմանդամություն ունեցող անձանց: Երևան քաղաքում գործող զբոսաշրջային տեղեկատվական աջակցության և քաղաքացիների սպասարկման կենտրոնների բարեկարգում և արդիականացում, ինչպես նաև զբոսաշրջային տեղեկատվական աջակցության և քաղաքացիների սպասարկման նոր կենտրոնների շահագործում:</p>	<p>Միթի Տուր» զբոսաշրջային քաղաքային երթուղին չի գործել: 2020թ. սեպտեմբերին նախատեսվում էր «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում նոր տեղեկատվական կենտրոնի շահագործում, որի նպատակով իրականացվել են մի շարք հանդիպում-քննարկումներ, սակայն Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնամասշտաբ պատերազմի հետևանքով՝ ռազմական դրության, ինչպես նաև արտակարգ դրության իրավական ռեժիմի գործողությամբ պայմանավորված նախատեսված աշխատանքները ժամանակավորապես հետաձգվել են:</p>	<p>2020 թ. սեպտեմբեր</p>	
4.	<p>Մարքեթինգային քաղաքականության իրականացում</p>	<p>Երևանի մասին հոդվածների տպագրում, գովազդային հոլովակների պատրաստում և լուսաբանում:</p>	<p>Երևան քաղաքի քույր և գործընկեր քաղաքների նախաձեռնությամբ իրականացվել է խաչաձև մարքեթինգային (cross-promotion) նախագիծ: Այս նախագծի փոխադարձ պայմանավորվածության համաձայն՝ Երևանի քույր քաղաքների, մասնավորապես, Կիևի, Օդեսայի (<a href="https://odessa-journal.com">https://odessa-journal.com</a>) և Սանկտ Պետերբուրգի պաշտոնական սոցիալական հարթակներում, զբոսաշրջային հավելվածներում, առցանց պարբերականներում ներկայացվել է Երևան քաղաքի տեսարժան վայրերի գրավորությունն ու</p>	<p>Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն  2020 թ. ապրիլ- դեկտեմբեր</p>	

			<p>զբոսաշրջային ներուժը, և համապատասխանաբար, Երևան քաղաքի զբոսաշրջային տեղեկատվական և քաղաքացիների սպասարկման կետրոնի ֆեյսբուքյան կայքէջում (<a href="#">Yerevan Tourism Information and Support Center</a>) ներկայացվել է վերոնշյալ քաղաքների զբոսաշրջային ներուժը: 2020 թ. դեկտեմբերին տուրիզմի բաժինը մասնակցել է «Իմ Հայաստան» ծրագրի 2020թ. զբոսաշրջային փորձառությունների վերաբերյալ առցանց հանդիպումներին:</p>		
--	--	--	---	--	--

**ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

1.	<p>Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների բարելավում</p>	<p>Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացում:</p>	<p>26.02.2020թ. կայացել է խորհրդակցություն վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների աշխատանքները համակարգող մասնագետների հետ: Կոմունալ տնտեսության վարչության բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների բաժնի մասնագետների կողմից մշտական խորհրդատվություն, մեթոդական ցուցումներ են տրվել կառավարման մարմինների ղեկավարներին, աշխատակիցներին և տեղեկատվություն՝ բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերին՝ ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և</p>	<p>Աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության</p>	
----	---	--	---	--	--

			պարտականությունների վերաբերյալ		
2.	Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում	Ծրագրով նախատեսվում է Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի 82016 քմ հարթ և 44300քմ թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքներ	Փաստացի վերանորոգվել է 82339 քմ հարթ տանիք և 59312քմ թեք տանիք	Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն, համատիրություններ	Աշխատանքների պատվիրատու են հանդիսանում վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը
3.	Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում	975 մուտքերի վերանորոգում	Փաստացի վերանորոգվել է 697 մուտք	Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն, համատիրություններ	Աշխատանքների պատվիրատու են հանդիսանում վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը
4.	Քաղաքային կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիր	Նուբարաշենի խճուղուն հարող և Աջափնյակի աղբավայրերի փակում և նոր քաղաքային աղբավայրի կառուցում: նախատեսվում է մեկնարկել Նուբարաշենի խճուղուն հարող առկա աղբավայրին հարակից տարածքում նոր աղբավայրի կառուցման ծրագիրը:	Ներկայումս ընթանում է շինարարական աշխատանքների կապալառուի ձեռքբերման մրցույթի գործընթաց:		
5.	«ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագիր»	90 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներին արևային ՖՎ համակարգերի տեղադրում, մուտքերի լուսավորության անցկացում:	Ծրագիրը երկարաձգվել է մինչև 2021թ. փետրվարի 28-ը, հաշվի առնելով համավարակը և պատերազմական դրությունը, անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել ևս 6 ամսով: Իրականացվել է ներքին լուսավորության տեղադրման աշխատանքներ, 49 շենքերի արևային պանելների տեղադրման աշխատանքներն ընթացքի մեջ են:		



6.	Քաղաքային արտաքին լուսավորություն	<p>28 փողոցներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.</p> <ul style="list-style-type: none"> <li>• առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով,</li> <li>• փոխել/ամրացնել լուսավորության հենասյուները,</li> <li>• փոխել լուսավորության հենասյուների բարձակները,</li> <li>• տեղադրել ստորգետնյա հաղորդուղիներ՝ պլաստիկ խողովակաշարերով,</li> <li>• տեղադրել լուսավորության համակարգի նոր մալուխներ՝ ստորգետնյա հաղորդուղիներում,</li> <li>• առկա վերգետնյա այլ նշանակության մալուխներն անցկացնել ստորգետնյա հաղորդուղիներով,</li> <li>• ներդնել լուսավորության ցանցի կառավարման համակարգ:</li> </ul>	<p>N-YRV/LED/1</p> <p>Լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքների իրականացման համար պայմանագիր է կնքվել ֆիննական Օննինեն ընկերության հետ:</p>	11.01.2019թ.-08.2021թ.	2019թ-ին սկսվել են շինարարական աշխատանքները: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2021 թ. օգոստոսին:
7.	Սանիտարական մաքրում և աղբահանություն	<p>Շարունակաբար բարելավվելու են սանիտարական մաքրման և աղբահանության իրականացման աշխատանքները: Հսկողություն է իրականացվելու սանիտարական մաքրման փողոցների, մայթերի, հրապարակների, բակային և ընդհանուր օգտագործման այլ տարածքների սանիտարական մաքրման, ինչպես նաև 4878 բազմաբնակարան շենքերից և մոտ 55000 մասնավոր տնատիրություններից իրականացվող աղբահանության աշխատանքների կատարման</p>	<p>Վարչական շրջաններում իրականացվել են աղբի համար նախատեսված կոնտեյներների տեղաբաշխման աշխատանքներ: «ԵԱՄՄ» համայնքային հիմնարկի համար ձեռք է բերվել հատուկ նշանակության մեքենա մեխանիզմներ: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կողմից ամենօրյա վերահսկողություն է իրականացվել «ԵԱՄՄ» համայնքային հիմնարկի կողմից իրականացվող աղբահանության և սանմաքրման</p>	Աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության	

		որակի նկատմամբ:	աշխատանքների նկատմամբ, ինչպես նաև վարչական շրջանների հետ համատեղ վերահսկողություն է սահմանվել «Դավարս» ՍՊԸ-ի կողմից կատարվող աշխատանքների նկատմամբ:		
8.	«Էլեկտրամատակարարում»	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ 2020 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի վարչական տարածքում նախատեսում է իրականացնել մոտ 45 կմ 0,4/6/10 ԿՎ մալուխային գծերի փոխարինման, բազմաբնակարան շենքերի 2ուրջ 560 մուտքերի էլեկտրամատակարարման տնտեսության վերակառուցման և 36 տրանսֆորմատորային ենթակայանների տանիքների վերակառուցման աշխատանքներ: Նշված աշխատանքների իրականացման արդյունքում կբարձրանա մայրաքաղաքում ֆիզիկական և իրավաբանական անձ հանդիսացող սպառողների էլեկտրական եներգիայի մատակարարման հասանելիությունն և որակը:	Ներդրումային ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի վարչական տարածքում փաստացի իրականացնել 33100 մ 0,4/6/10 ԿՎ մալուխային գծերի փոխարինման, բազմաբնակարան շենքերի 602 մուտքերի էլեկտրամատակարարման տնտեսության վերակառուցման և 47 տրանսֆորմատորային ենթակայանների տանիքների վերակառուցման աշխատանքներ:	Իրականացվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից	
9.	«Ջրամատակարարում և ջրահեռացում»	Պարտադիր կատարման աշխատանքների 2020թ. ծրագրի շրջանակներում «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից Արաբկիր և Կենտրոն վարչական շրջաններում կիրականացվի շուրջ 2110 գծմ խմելու ջրագծերի (խողովակաշարերի) նորով	Փաստացի կատարվել է 1282մ կոյուղագծի և 3422մ ջրագծի փոխարինման աշխատանքներ: Երևան համայնքի 2020 թվականի բյուջեով փաստացի կատարվել է 1192մ կոյուղագծի կառուցման/վերակառուցման աշխատանքներ:	Իրականացվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և Երևանի քաղաքապետարան կողմից	

		<p>փոխարինման աշխատանքներ, նոր ջրաչափական հանգույցների և դիտահորերի ծածկերի բարձրացման աշխատանքներ:</p> <p>Երևան համայնքի 2020 թվականի բյուջեով նախատեսված 210 մլն. դրամի շրջանակներում մայրաքաղաքի տասներկու վարչական շրջաններում կիրականացվեն շուրջ 4000 գծմ. կոյուղատար և հեղեղատար ցանցի վերակառուցման և նոր ցանցի կառուցման աշխատանքներ, որի արդյունքում կապահովվի բազմաբնակարան շենքերի և մասնավոր առանձնատների ջրահեռացման համակարգի անխափան աշխատանքը:</p>			
10.	«Գազամատակարարում»	<p>«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 2020թ. մոտ 895 մլն. դրամի ներդրումային ծրագրի շրջանակներում Երևան քաղաքում կիրականացվի մոտ 9կմ գազամատակարարման ցանցի շինարարության և հիմնանորոգման աշխատանքներ, որի արդյունքում կբարելավվի շուրջ 13660 բաժանորդների գազամատակարարումը</p>	<p>Իրականացվել է 3777մ գազամատակարարման ցանցի շինարարության և հիմնանորոգման աշխատանքներ:</p>	<p>Իրականացվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից</p>	
11.	«Կապ և հեռահաղորդակցություն»	<p>«Վեոն Արմենիա» ընկերության կողմից 2020 թվականին Երևան քաղաքում կշարունակվի կապի նոր ժամանակակից ենթակառուցվածքների տեղադրման ծրագիրը՝ մասնավորապես Քանաքեռ-Զեյթուն և Նորք Մարաշ վարչական շրջաններում կտեղադրվեն թվով 10</p>	<p>Քանաքեռ-Զեյթուն և Նորք Մարաշ վարչական շրջաններում տեղադրվել են թվով 10 (TIII) տիպի հաղորդակցության պահարաններ:</p>	<p>Իրականացվել է «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի կողմից</p>	

		(TIII) տիպի հաղորդակցության պահարաններ:			
<b>ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ</b>					
1.	<p>Մրցունակ կրթության ապահովմանն ուղղված աշխատանքների կազմակերպում և աջակցություն</p>	<p>«ԿՏԱԿ-ի» համագործակցությամբ կապահովվի «Հայկական կրթական միջավայրի պաշարների շտեմարանի» և էլեկտրոնային ուսումնական այլ նյութերի օգտագործումը դասապրոցեսում:</p> <p>Նույն համագործակցությամբ «Իթվինինգ» ծրագրով կիրականացվի ուսուցիչների վերապատրաստում:</p> <p>«Ստարտափ-Երևան» նախագծով կրթության որակի բարձրացմանն ուղղված կմշակվեն և կիրականացվեն աշակերտական ծրագրերը՝ «Միասին կարող ենք» նշանաբանով:</p> <p>SZS կիրառմամբ դասանյութն առավել հետաքրքիր և մատչելի դարձնելու համար դպրոցները համալրվելու են նորագույն տեխնոլոգիաներով: Այս նպատակով</p> <p>-կրթական ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ ձեռք բերել պայմանավորվածություն՝ համապատասխան ծրագրերում Երևանի հանրակրթական դպրոցների ընդգրկվածությունն ապահովելու համար:</p>	<p>ՀՀ կառավարության՝ 2020 թվականի մարտի 16-ի N298-Ն որոշմամբ մարտի 16-ից ՀՀ ողջ տարածքում հայտարարվել էր արտակարգ դրություն: Որոշման հավելվածի 21-րդ կետի համաձայն՝ արտակարգ դրության ողջ ընթացքում պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում դադարեցվել է ուսումնական գործընթացը, որն այնուհետև կազմակերպվել է հեռավար եղանակով: Հեռավար կրթության իրականացման շրջանակում լայնորեն կիրառվել են էլեկտրոնային կրթական ռեսուրսները, ստեղծվել հաղորդակցության առցանց հարթակներ:</p> <p>ԿՏԱԿ-ի կողմից գործարկվող ԴԿՏՀ համակարգով իրականացվել է էլեկտրոնային մատյանների վարումը, կազմակերպվել խորհրդատվական սեմինարներ, քննարկումներ:</p> <p>«Իթվինինգ» ծրագրով հունիսին իրականացված ուսուցիչների առցանց վերապատրաստման դասընթացին մասնակցել են նաև Երևանի դպրոցների ուսուցիչներ:</p> <p>«Անգլերեն ակումբներ՝ արդի հմտություններ, ուժեղ հասարակություն» կրթական վեցամյա ծրագրում (British Council Հայաստան) ընդգրկվել են Երևանի</p>	<p>Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Կրթության տեխնոլոգիաների ազգային կենտրոն, British Council Հայաստան</p> <p>1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ</p>	

		<p>-հեռահաղորդակցության տարբեր ընկերությունների համագործակցությամբ («Յուքոմ»)՝ բյուջեով նախատեսած մրցույթ-միջոցառումներում հաղթող դպրոցներին պարգևատրել համակարգիչներով կամ (հնարավորության դեպքում) դպրոցում ձևավորել համակարգչային նոր կարիներտ:</p> <p>-Էլեկտրոնային գրատախտակների, տեխնոլոգիական այլ միջոցների ձեռքբերման նախաձեռնում՝ կապ ստեղծելով սվյալ դպրոցի գործարար շրջանավարտների, ինչպես նաև տարբեր հովանավորների, բարեգործ հայրերի հետ:</p>	<p>դպրոցների 57 ուսուցիչներ:</p> <p>«Ստարտափ-Երևան» նախագծով կրթության որակի բարձրացմանն ուղղված նախաձեռնությունները չեն իրականացվել՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ, ապա նաև ռազմական դրություններով:</p> <p>Հեռավար կրթության իրականացման շրջանակում տեխնիկական միջոց չունենալու պատճառով կրթության գործընթացից դուրս մնացած երեխաներին ժամանակավոր օգտագործման են տրամադրվել դպրոցների համակարգիչները, ևս 91 աշակերտների տրամադրվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից ստացված պլանշետներ:</p> <p>375 շահառուի (ուսուցիչ և սովորող) տրամադրվել են Բիլայն ինտերնետ կապի հատուկ առաջարկների փաթեթների վկայականներ</p> <p>Երևանի հ.87 միջնակարգ դպրոցին ամերիկահայ բարերարներ դոկտոր Հակոբ և Լյուտովիկա Այնթափլեանները նվիրաբերել են ինտերնետ կապով 25 նոր պլանշետ:</p>		
2.	Երևանի քաղաքապետարանի դպրոցներում համընդհանուր ներառականության ներդրում	Երևանի քաղաքապետարանի դպրոցներում 2019թ. հունվարից, համաձայն Հայաստանի	Երևանի ենթակայության բոլոր դպրոցներում իրականացվել է ներառական կրթություն՝ միտված	Աշխատակազմի հանրակրթության վարչություն,	

		<p>Հանրապետության կառավարության՝ 2016թ. փետրվարի 18-ի «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի» հ. 6 արձանագրային որոշման պահանջների, շարունակվելու են համընդհանուր ներառման գործընթացները: Ծրագրի շրջանակում «Հույսի կամուրջ» ՀԿ-ի համագործակցությամբ իրականացվելու են հանրակրթական դպրոցների ուսուցիչների ներառական կրթության տեսության և կիրառման հարցերով վերապատրաստումներ: Դպրոցները կունենան ուսուցչի օգնականներ, համապատասխան կազմակերպությունների միջոցով կիրականացվի նրանց վերապատրաստման գործընթացը: Շարունակվելու են սանհանգույցների հարմարեցման, թեքահարթակներով ապահովման աշխատանքները այն դպրոցներում, ուր կընդգրկվեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող դպրոցականներ: Վերանորոգվող դպրոցների ծրագրերում կնախատեսվեն շենքային պայմանների համապատասխանեցում՝ հատուկ</p>	<p>յուրաքանչյուր՝ այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական կարիքների բավարարմանը:</p> <p>«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի» հետ համագործակաբար 2020թ. ապրիլից մեկնարկել է «Ուսուցիչների ներառող դասավանդման վերապատրաստման կարողությունների զարգացում» ծրագրի 2-րդ և 3-րդ փուլերը. համակարգվել են 41 մենթորների աշխատանքները Երևանի ենթակայության դպրոցներում:</p> <p>Երևանի 4 տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների մասնագետները համագործակցել են դպրոցների հետ, մասնավորաբար՝ դպրոցների բազմամասնագիտական թիմերի ներկայացուցիչների, ուսուցիչների օգնականների հետ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին հեռավար աջակցություն տրամադրելու շրջանակում: Վերջիններիս կարիքներին համապատասխան՝ դպրոցներում շարունակվել են սանհանգույցների հարմարեցման, թեքահարթակներով ապահովմանը միտված աշխատանքները:</p> <p>Վերանորոգման ծրագրերում</p>	<p>Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններ, դպրոցներ</p> <p>1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ</p>	
--	--	--	--	--	--

		կարիքներով երեխաների պահանջներին:	ներառված դպրոցներում նախատեսված է պայմանների համապատասխանեցում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների կարիքներին:		
3.	Մրցունակ կրթության ապահովման նպատակով արտակարգ ընդունակություններով դպրոցականների հայտնաբերում և իրախուսում	Սովորողների ինտելեկտուալ կարողությունների զարգացմանը նպաստելու նպատակով դպրոցական առարկայական օլիմպիադաների տարածքային, քաղաքային և հանրապետական փուլերի կազմակերպում և անցկացում: Հաղթողներին՝ հանրապետական և միջազգային օլիմպիադաներին մասնակցելու ապահովմանը աջակցություն:	ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի՝ Երևանի քաղաքային փուլին փաստացի մասնակցված 1143 սովորողներից 359-ը արժանացել են 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմների: 369 սովորող իրավունք է ստացել մասնակցել օլիմպիադայի հանրապետական փուլին, որին փաստացի մասնակցած 360 աշակերտներից 122-ը արժանացել են դիպլոմների ըստ հետևյալի. 1-ին կարգ՝ 29 աշակերտ, 2-րդ կարգ՝ 36 աշակերտ, 3-րդ կարգ՝ 57 աշակերտ: Գովասանագրերի է արժանացել 63 աշակերտ:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  1-ին, 2-րդ եռամսյակներ	
4.	Մրցունակ կրթության ապահովմանն ուղղված աշխատանքների կազմակերպում և աջակցություն (ՏՀՏ-ների կիրառում դասապրոցեսում)	Հետաքրքիր և բովանդակալից դասապրոցեսի ապահովումը կրթության որակի բարձրացման նախապայման է: Այս նպատակով՝ - բնագիտամաթեմատիկական առարկաների դասավանդումն իրականացվելու է տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ՝ փոխներգործուն մեթոդներով: -դասապրոցեսում ապահովվելու է «Հայկական կրթական միջավայրի պաշարների շտեմարանի» և	Հեռավար կրթության ողջ ընթացքում բոլոր առարկաների՝ ներառյալ բնագիտամաթեմատիկական առարկաների դասավանդումն իրականացվել է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, լայնորեն օգտվելով էլեկտրոնային կրթական պաշարներից, մասնավորաբար այդ նպատակի համար ձևավորված heravar.amedu.am հարթակում ներկայացված կրթական ռեսուրսներից: 2020-2021 ուստարվա մեկնարկին կրթության հեռավար ուսուցման կենտրոնի (ՀՈւԿ) կողմից	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, Հեռավար ուսուցման կենտրոն, Կենտրոնական բանկ  1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ	

		<p>էլեկտրոնային ուսումնական այլ նյութերի օգտագործումը: «Կրթական համակարգում նախնական ինժեներական կրթության ներդրում» ծրագրի շրջանակում շարունակվելու է համագործակցությունը «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի հետ՝ հ.հ.11,12,155 դպրոցներում գործող ռոբոտաշինության խմբակները «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների վերակազմավորելու նպատակով:</p>	<p>կազմակերպվել է հեռավար կենտրոնացված ուսուցում, որին մասնակցել են Երևանի՝ առկա ուսուցման մեջ չներառված շուրջ 500 աշակերտներ:</p> <p>Ֆինանսական կրթության ազգային ռազմավարության շրջանակում «Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագրով շարունակվել են ուսուցիչների վերապատրաստման դասընթացները՝ առցանց եղանակով: Դասընթացներին մասնակցել են Երևանի դպրոցների «Հասարակագիտություն», «Մաթեմատիկա» առարկաների ուսուցիչներ, դասվարներ՝ ընդհանուր առմամբ շուրջ 300 անձ:</p>		
5.	Դպրոցական հիմնանորոգում շենքերի	<p>Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում կառուցվելու կամ ամրացվելու են պետական հանրակրթական դպրոցներ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 13.07.2017թ. հ.805-Ն որոշման: Նշված որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ</p>	<p>«Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի» շրջանակում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը մեկնարկել է «Երևանի Հ. Կարապենցի անվան հ.6 հիմնական դպրոց», «Երևանի Ղ. Ալիշանի անվան հ.95 միջնակարգ դպրոց», «Երևանի Ջ.Աբրահամյանի անվան հ.111 հիմնական դպրոց», «Երևանի Ալ.Բլոկի անվան հ.122 հիմնական դպրոց», «Երևանի Մուրացանի անվան հ.18 հիմնական դպրոց» և «Երևանի հ.116 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների շինարարական աշխատանքների իրականացման մրցութային գործընթացը և շինարարական աշխատանքները: Երևանի հհ.22,51,143,191 դպրոցների վերանորոգման աշխատանքներն</p>	<p>ՀՀ կառավարություն, Ասիական զարգացման բանկ, աշխատակազմի հանրակրթության վարչություն</p> <p>1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ</p>	



		<p>23.07.2015թ. հ.797-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններով քաղաքապետարանի ենթակայության թվով 13 դպրոցների ցանկը, որոնք ենթակա են վերակառուցման կամ ամրացման (հ.հ.6,18,22,51,68,91,95,116,122,135,153,191 դպրոցները և «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրը): Երևանի Ռ. Իշխանյանի անվ.հ.153 դպրոցում աշխատանքներն ավարտված են, 2020 թվականին կավարտվեն հ.հ.20,135,143,191 դպրոցների շինարարությունը, մնացած դպրոցներում վերանորոգման աշխատանքները կշարունակվեն: Երևանի հ.հ.154,87,24,33 դպրոցների վերանորոգումն իրականացվելու է սփյուռքահայ բարեգործների կողմից: 2020թ. ավարտին կհասցվի Երևանի հ.154 դպրոցի մարզական և հանդիսությունների դահլիճների վերանորոգումը:</p>	<p>ընթացքի մեջ են: Ավարտվել հհ. 91, 135, 153 դպրոցներում իրականացվող վերանորոգման աշխատանքները: Բարերարների միջոցներով մասնակի վերանորոգման աշխատանքներ են իրականացվել հհ. 24 և 154 հիմնական դպրոցներում:</p>		
6.	<p>Սովորողների արժեքային համակարգի ձևավորման աջակցություն</p>	<p>Դպրոցներում կիրականացվեն հայ ժողովրդի նշանավոր զավակներին նվիրված շաբաթներ, տարվա հոբելյարներին նվիրված միջոցառումներ, որոնցից կատարված ծաղկաքաղով կկազմակերպվի համաքաղաքային հանդիսություն: Ծրագրի նպատակի իրականացման համար, ըստ վարչական շրջանների,</p>	<p>Աշակերտական ակումբների ձևավորման գործընթացը և վերջինիս շրջանակում նախատեսված ծրագրերը չեն իրականացվել՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ և ռազմական դրություններով:</p> <p>Էդիթ Պրինտ հրատարակչության նախաձեռնությամբ իրականացված ընթերցանության ստեղծագործական</p>	<p>Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Էդիթ Պրինտ հրատարակչություն</p>	

		<p>ստեղծվելու են աշակերտական ակումբներ.</p> <p>Մասնագիտական կողմնորոշման՝ կանցկացվեն ոչ ֆորմալ դասընթացներ՝ կիրառելով Հայաստանի մանուկների հիմնադրամի (COAF) մշակած մեթոդաբանությունը, որը 80-ից ավել դպրոցներում ներդրվել է «Մեյվ դը չիլդրեն» ՀԿ կողմից: Կազմակերպվելու են հանդիպումներ մասնագիտության մեջ հաջողած անձանց հետ՝ «Դասը վարում է մասնագետը» խորագրով:</p> <p>Գրական ակումբ- միտված է աշակերտների շրջանում ընթերցանության նկատմամբ հետաքրքրության, քննադատական և վերլուծական մտածողության խթանմանը:</p> <p>Բնապահպանական (էկո) ակումբ - դպրոցականների շրջանում բնապահպանական դաստիարակությանը միտված նախաձեռնողական ծրագրերի իրականացումն է՝ հետևյալ ուղղվածություններով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• աղբի տեսակավորման մասին գիտելիքների տարածումը և դպրոցներում կիրառության հնարավորությունների ստեղծումը,</li> <li>• բիո էթիկայի սկզբունքների հանրայնացումը,</li> </ul>	<p>մրցույթում ապահովվել է աշակերտների ակտիվ մասնակցություն: Մրցույթի երեք փուլերի արդյունքում հաղթող 20 աշակերտներից 4-ը Երևանի դպրոցների աշակերտներ են:</p> <p>Ֆիզիկական կուլտուրայի և ֆիզիկական դաստիարակության խթանման նպատակով «Մնա տանը- եղիր առողջ» ֆիզկուլտուրայի համալիր վարժությունների տեսաձայնագրությունների մրցույթին Երևանի դպրոցների աշակերտների ներկայացրած տեսանյութերից լավագույն չորսն ընտրվել և ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ:</p>	<p>2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ</p>	
--	--	--	---	-------------------------------------	--

		<ul style="list-style-type: none"> <li>• «Լավագույն դպրոցական այգի» խրախուսական մրցույթի անցկացումը,</li> <li>• հայրենաճանաչողական արշավների կազմակերպումը,</li> <li>• արձակուրդների շրջանում ագրոտուրիզմի նախաձեռնումը և խթանումը:</li> </ul>			
7.	<p>Ուսուցիչների նորարարական կարողությունների զարգացման աջակցություն</p>	<p>Մրցունակ կրթության ապահովման, կրթության որակի բարձրացման նպատակով իրականացվելու են ուսուցիչների նորարարական կարողությունների զարգացման, կրթական նորացող մեթոդաբանության յուրացման, նրանց մասնագիտական կատարելագործմանն ուղղված վերապատրաստումներ՝ համապատասխան բուհերի և կազմակերպությունների համագործակցությամբ(առկա են հուշագրեր):</p> <p>Արժևորելով մայրաքաղաքի վաստակաշատ մանկավարժների ներուժը -նախատեսվում է երևանյան դպրոցներում և մանկապարտեզներում կազմակերպել «Վարպետաց դասեր» նորարարական փորձով հայտնի մանկավարժների կողմից: Դպրոցների տնօրենների փորձի փոխանակման և «Լավագույն տնօրենի» փորձի</p>	<p>Մեկնարկել է կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ-ի «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակում իրականացվող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների և վարչական աշխատողների առցանց վերապատրաստում՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» և «Երկրաչափություն» առարկաների մասնագետների ներգրավմամբ:</p> <p>Կազմակերպվել են «Շախմատ» առարկայի ուսուցիչների առցանց վերապատրաստման դասընթացի 2 փուլերը:</p> <p>2019 թվականի «Լավագույն ուսուցիչ» անվանակարգում հաղթող ճանաչված «Երևանի հ. 186 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կենսաբանության ուսուցչի ներկայացրած բաց դասին փորձի փոխանակման նպատակով մասնակցել են 32 ուսուցիչներ:</p> <p>«Այբ» կրթական հիմնադրամի նախաձեռնությամբ դպրոցների 15</p>	<p>Աշխատակազմի հանրակրթության վարչություն, Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ, «ԱՅԲ» կրթական հիմնադրամ</p> <p>1-ին, 2-րդ, 3-րդ եռամսյակներ</p>	

		մասայականացման գործընթացի կազմակերպում: -փորձի փոխանակման նպատակով շարունակվելու են ուսուցիչների և մանկապարտեզների դաստիարակների փոխայցելություններ Երևանի քույր քաղաքների կրթական հաստատություններ: Նախատեսվում է նաև Երևանի և Սփյուռքի դպրոցների միջև հեռուստակամուրջ՝ հայրենագիտության դասերի կազմակերպման, ինչպես նաև միջմշակութային կապերի ստեղծման նպատակով:	տնօրենների մասնակցությամբ կայացած հանդիպման շրջանակում ներկայացվել է «Քան» ակադեմիայի հայաստանյան գրասենյակի՝ առցանց կրթական ծրագրի հնարավորությունները:		
8.	Մանկապարտեզների գույքի թարմացում	Մանկապարտեզների գույքի նորացում. • կոշտ գույք (երեխաների և աշխատակազմի համար) • կենցաղային տեխնիկա, • խոհանոցային սպասք:	Մանկապարտեզներին բաշխվել է նախատեսված գույքը՝ ըստ ներկայացված հայտերի • կենցաղային տեխնիկա, • խոհանոցային սպասք:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, վարչական շրջաններ 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ	
9.	Մանկապարտեզների շենքերի նորոգում	Թվով 66 մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում:	1. Երևանի քաղաքապետարանի շինարարական ծրագրով ընդգրկված թվով 11 մանկապարտեզներ /հհ.20,21,35,76,88,90,97,98,99,104,112/ հիմնանորոգվել են: Ավարտվել են աշխատանքները հհ.20, 21,76, 88, 90,99,112 հաստատություններում: Հհ.35,97,98,104 մանկապարտեզներում շինարարական աշխատանքները մոտենում են ավարտին: 2. Երևանի էներգաարդյունավետության ծրագրով	Աշխատակազմի հանրակրթության, շինարարության և բարեկարգման վարչություններ, Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ	

			նախատեսված շինարարական աշխատանքներում ընդգրկված թվով 12 մանկապարտեզներից /հհ.23,78,81,93,36,47,49,71,100,103,110,161/ հիմնանորոգվում են հհ 36,49 մանկապարտեզները: Մյուս հաստատություններում աշխատանքները կսկսվեն 2021թ-ին:		
10.	Նախադպրոցական կրթության մատչելիություն	Շենքերի հիմնանորոգում, գույքի նորացում: Հերթագրված երեխաների ընդունելության հիմնախնդրի կարգավորում: Մանկապարտեզներում համընդհանուր ներառման գործընթացի իրականացում: Նախադպրոցական անվճար կրթություն:	1. Թվով 13 մանկապարտեզների հիմնանորոգում, 2. Թվով 161 մանկապարտեզների նոր գույքի տրամադրում, 3. «Վորլդ Վիժն» Հայաստանյան գրասենյակի և Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ կազմակերպված՝ համընդհանուր ներառման ծրագրի շրջանակներում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հհ. 78,81,84,91,96,97 մանկապարտեզների տնօրենների, դաստիարակների և նրանց օգնականների վերապատրաստման գործընթացի իրականացում և ամփոփում /հեռավար/ 4. Տարբեր գերատեսչությունների կողմից մանկապարտեզներում իրականացվել է /հեռահար/ առցանց վերապատրաստման գործընթաց COVID-19 կանխարգելման նպատակով: 5. Ձևավորվել են թվով՝ 4 տարիքային նոր խմբեր /հհ.50,79,119, 103/ մանկապարտեզներում:	Աշխատակազմի հանրակրթության, շինարարության և բարեկարգման վարչություններ, վարչական շրջաններ, «Վորլդ Վիժն» կազմակերպության հայաստանյան գրասենյակ, ԲԺԻՉկների կատարելագործման ազգային ինստիտուտ  1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ	
<b>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ</b>					
1.	Մայրաքաղաքի գործընկերային	Ստորագրել համագործակցության համաձայնագրեր Քաթարի	Ս.թ. ապրիլ- մայիս ամսիներին նախատեսվում էր Երանի		

	<p>հարաբերությունների ընդլայնում</p>	<p>մայրաքաղաք Դոհայի, Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի, Սլովենիայի մայրաքաղաք Լյուբլյանայի, Եգիպտոսի Արաբական Հանրապետության մայրաքաղաք Կահիրեի, ԻԻՀ Շիրազ, Դոգաստանի մայրաքաղաք Բիշկեքի, Ղազախստանի մայրաքաղաք Նուր-Սուլթանի հետ: Ակտիվացնել համագործակցության կապերը արդեն իսկ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակներում /Փարիզ, Լոս Անջելես, վենետիկ, Ռիգա, Սոֆիա, Աթենք, Բեյրութ, Լիոն, Մարսել, Քեմբրիջ (ԱՄՆ) և այլն/, Թարմացնել համագործակցության համաձայնագրերը ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաքի, Մոնտենեգրոյի մայրաքաղաք Պոդգորիցայի, Բելառուսի մայրաքաղաք Մինսկի, Իտալիայի Տոսկանա և Կանադայի Մոնրեալ քաղաքների հետ, Երևանի քաղաքապետարանի և Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև կնքված համագործակցության ծրագրի շրջանակներում նախատեսվում է անցկացնել Երևանի օրերը Սանկտ Պետերբուրգում, աջակցել ներդրումային միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովմանը, գործընկեր քաղաքներում ներդրումային շնորհանդեսների կազմակերպմանը, ակտիվացնել Երևանի տնտեսապես զարգացած գործընկեր</p>	<p>քաղաքապետարանի փորձագիտական տարբեր խմբերի այցելությունը Իլ դը Ֆրանս/Փարիզի շրջան/ և Լիոն, որոնք կորոնավիրուսի համաճարակի պատճառով հետաձգվել են:</p> <p>Լիոնի և Մարսելի հետ նամակագրական աշխատանքներ են իրականացվել սոցիալական ծրագրերի և գնումների ոլորտներում ֆրանսիական փորձի փոխանակման նպատակով:</p> <p>Նամակագրական կապ է հաստատվել Չինաստանի Չոնգցին քաղաքի հետ: Հաստատված նամակագրության արդյունքում Չոնգցին քաղաքը Չինաստանի կողմից ՀՀ տրամադրած օգնության շրջանակներում առանձին օգնություն է ուղարկել Երևանին բժշկական դիմակների և ձեռնոցների տեսքով:</p> <p>Պետերբուրգի օրերի նախատապատրաստական աշխատանքները, միջոցառումը նախատեսված էր իրականացնել մայիսի 12-14: Կորոնավիրուսի պատճառով միջոցառումը տեղափոխվել է սեպտեմբեր:</p> <p>Նամակագրություն է իրականացվել Չինաստանի Ցինդաու քաղաքի հետ: Նախատեսվում էր պատվիրակության այց Երևան, , որը կորոնավիրուսի համաճարակի պատճառով հետաձգվել է:</p> <p>Թարմացվել են Երևան-Կահիրե և Երևան-Բիշքեկ համաձայնագրերը,</p>		
--	--------------------------------------	---	--	--	--

		<p>քաղաքներից Երևան գործարար այցելությունների կազմակերպման աշխատանքները, ակտիվացնել կապերը Երևանի քաղաքապետարանի և գործընկեր քաղաքների տուրիզմի պատասխանատուների միջև, իրականացնել եղբայրության պուրակներ և զբոսայգիներ հիմնելու ծրագրեր, խրախուսել և ընդլայնել վարչական շրջանների և գործընկեր քաղաքների, ինչպես նաև խոշոր քաղաքների վարչական միավորների միջև համագործակցությունը տրամադրել տեղեկատվություն Երևանի գործընկեր քաղաքներին Երևանում անցկացվելիք միջոցառումների և փառատոնների վերաբերյալ:</p>	<p>որոնք արժանացել են Երևան քաղաքի ավագանու հավանությանը:</p>		
2.	<p>Միջազգային համագործակցությունների շրջանակներում համատեղ ծրագրերի մշակում և միջոցառումների իրականացում</p>	<p>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է - ակտիվացնել աշխատանքները սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական հաստատությունների հետ կոնկրետ ծրագրերի ներկայացման առումով, համագործակցել միջազգային և տարածաշրջանային կառույցների շրջանակներում, - ցուցաբերել ակտիվ մասնակցություն ամենամյա գազաթաժողովներին, կազմակերպել փոխայցելություններ ֆրանսիական քույր և գործընկեր քաղաքների հետ</p>	<p>ԵՄ և Երևանի քաղաքապետարանի միջև վտանգավոր թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում իրականացվել են փոխըմբռնման հուշագրի կնքման նախապատրաստական աշխատանքներ և հունվարի 21-ին կազմակերպվել է կնքման արարողությունը:</p> <p>ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության հետ համատեղ հունվարի 30-ին Երևանի քաղաքապետարանում կազմակերպվել է «Գաղափարների գիշեր» միջոցառումը:</p>		

		<p>և մշակել համատեղ ծրագրեր,  - ցուցաբերել ակտիվ մասնակցություն «Եվրոսիթիս» ասոցիացիայի աշխատանքներին, ինչպես նաև ապահովել հնարավոր ներգրավում Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրերին,  - ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ բանակցությունների վարում տեխնիկական օժանդակության տրամադրման վերաբերյալ:  - իրականացնել ԱՄՆ Լոս Անջելես քաղաքի հետ համատեղ ծրագրեր  - իրականացնել Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի քաղաքի հետ համատեղ ծրագրեր  - իրականացնել Հորդանանի Հաշիմյան Թագավորության մայրաքաղաք Ամմանի հետ համատեղ ծրագրեր,  - իրականացնել ՀՀ մարզերի և ԱՀ շրջանների հետ համատեղ ծրագրեր</p>	<p>Իրականացվել են ԵՄ ՆԿ-ում Վրաստանի նախագահության շրջանակներում 2020 թվականի մարտի 6-ին Ստրասբուրգում կայանալիք միջազգային համաժողովին մասնակցության նախապատրաստական աշխատանքները: Միջոցառումը չեղարկվել է կորոնավիրուսի պատճառով:</p> <p>Լիոնի քաղաքապետարանի հետ մշակվել է և նախնական պայմանավորաձույթուն ձեռք բերվել կազմակերպելու հայկական կողմի մասնագետների փորձի փոխանակումը ֆրանսիական կողմի մասնագետների հետ տրանսպորտի, ձևամաքրման, աղբահանության և գնումների ոլորտներում:</p> <p>Իլ դը ֆրանսի/ Փարիզի շրջան/ հետ համագործակցության շրջանակներում քաղաքային տնտեսության 3 ոլորտներում /տրանսպորտ, թափոններ, ուրբանիզմ/ մշակվել է համագործակցության գործողությունների պլանի նախագիծը 2020-2022 թվականների համար:</p> <p>Երևանի քաղաքապետարանի և «Մենեջմենթ Սիսթեմզ Ինթերնեշնլի» (ՄՄԻ) միջև ստորագրվել է պայմանագիր «Աջակցություն Հայաստանին Նախաձեռնություն» ծրագրի կողմից ներկայացրած տեխնիկական աջակցության «Առանձնացված թափոնների կառավարման և վերամշակման</p>		
--	--	--	---	--	--



			<p>պիլոտային նախաձեռնություն Երևանում»:</p> <p>Երևանի քաղաքապետարանի և «Մենեջմենթ Սիսթեմզ Ինթերնեշնլի» (ՄՄԻ) միջև ստորագրվել է տեխնիկական աջակցության պայմանագիր «Աղբի տեսակավորման իրազեկման արշավ Երևանում» ներկայացրած «Աջակցություն Հայաստանին Նախաձեռնություն» ծրագրի կողմից:</p>		
3.	<p>Համագործակցությունների շրջանակում քաղաքապետարանի կառուցվածքային առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցների կարողությունների բարձրացում</p>	<p>և</p> <p>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների աշխատակիցների վերապատրաստումների կազմակերպում և փորձագիտական աջակցություն, անհրաժեշտության դեպքում նաև օտար լեզուների դասընթացների կազմակերպում:</p> <p>Ծրագրի շրջանակներում կիրականացվեն նաև փորձի փոխանակման ծրագրեր քույր և գործընկեր քաղաքների հետ համագործակցությունների շրջանակում, որը կներառի Երևանի և Թեհրանի քաղաքապետարանների ներկայացուցիչների փոխայցելություններ, Երևանի քաղաքապետարանի և Լիոնի Մետրոպոլի միջև համագործակցություն, Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի</p>	<p>Կազմակերպվել է ս.թ. մարտի 2-ից 8-Լիոնի քաղաքապետարանի պատվիրակության այցը Երևան ուրբանիզմի բնագավառում փորձի փոխանակման և հետագա ծրագրերի մշակման և նոյեմբեր ամսին կայանալիք հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության համաժողովի նախապատրաստական հարցերը քննարկելու նպատակով</p> <p>Կազմակերպվել է ս.թ. հունվարի 20-24-ը Իլ դը Ֆրանսի փորձագիտական խմբի այցը Երևան /ուրտներ տրանսպորտ, թափոններ, ուրբանիզմ/: Հայկական կողմի համապատասխան մասնագետների ու պատասխանատուների հետ տեղի են ունեցել քննարկումներ ու հանդիպումներ և հետագա աշխատանքների պլանավորում:</p> <p>Արցախյան պատերազմի և դրան հաջորդող ժամանակահատվածում. -ԱԳՆ հետ համագործակցելով նամակներ և գրություններ են ուղարկվել գործընկեր մի շարք</p>		

		և Երևանի քաղաքապետարանի միջև համագործակցության շրջանակներում մասնագիտական սեմինարների և փորձի փոխանակման ծրագրի շարունակական իրականացում՝ ֆրանսիական առաջատար մասնագետների մասնակցությամբ	քաղաքների կապված տարբեր հարցերի շուրջ, -Ակտիվ աշխատանքներ են տարվել տարբեր դեսպանատների և գործընկեր քաղաքների հետ, -Իրականացվել են նյութական և ֆինանսական հումանիտար օգնություն ստանալու, դրա տեղափոխման, ստացման և բաշխման աշխատանքներ:		
<b>ՄՇԱԿՈՒՑԹ</b>					
1.	«Արտադպրոցական դաստիարակություն» ծրագիր (Երաժշտական և արվեստի դպրոցներ)	Երաժշտական և արվեստի դպրոցներում դպրոցահասակ երեխաների մշակութային նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական գեղագիտական դաստիարակության, երաժշտարվեստի և արվեստների ուսուցման իրականացում:	Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսուցումն իրականացվել է տարեսկզբից մինչև 2020թ. մարտի 14-ը, որից հետո, արտակարգ դրության իրավական ռեժիմի գործողության ժամկետում երաժշտական և արվեստի դպրոցներում դասընթացներն իրականացվել են հեռավար եղանակով: Ուսումնական գործընթացը վերսկսվել է սեպտեմբերի 15-ից:	Երևանի ենթակայության երաժշտական, արվեստի և կերպարվեստի դպրոցներ	
2.	Արտադպրոցական դաստիարակություն» ծրագիր (մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական կենտրոններ)	Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում, հանրակրթական դպրոցների աշակերտների ազատ ժամանցի կազմակերպում, հետաքրքրությունների և նախասիրությունների զարգացման համար պայմանների ստեղծում, մտավոր-հոգևոր, ստեղծագործական ունակությունների զարգացում, գեղագիտական ընկալման	Արտադպրոցական դաստիարակության հաստատությունները՝ մշակույթի տները, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնները գործել են տարեսկզբից մինչև 2020թ. մարտի 14-ը, որից հետո, արտակարգ դրության իրավական ռեժիմի գործողության ժամկետում համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպման հաստատությունները չեն գործել: Ուսումնական գործընթացը վերսկսվել	Երևանի ենթակայության մշակույթի տներ և մանկապատանեկան ստեղծագործության կենտրոններ	

		ընդլայնում, ֆիզիկական զարգացում, առողջ ապրելակերպի, ռազմահայրենասիրական դաստիարակության, բնապահպանության և կիրառական այլ ոլորտներում գիտելիքների յուրացում, ապագա կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորում:	է սեպտեմբերի 15-ից:		
3.	Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում	Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում, համայնքային ազատ ժամանցի կազմակերպման միջոցով տարբեր տարիքային խմբերի հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարում, մտավոր-հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացում, սպորտային, ռազմահայրենասիրական դաստիարակություն, բնապահպանական և կիրառական այլ ոլորտներում գիտելիքների ձևավորում:	Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեությունն իրականացվել է տարեսկզբից մինչև 2020թ. մարտի 14-ը, որից հետո, արտակարգ դրության իրավական ռեժիմի գործողության ժամկետում համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպման հաստատությունները չեն գործել: Ուսումնական և լրացուցիչ կրթադաստիարակչական գործունեությունը վերսկսվել է սեպտեմբերի 15-ից:	Երևանի ենթակայության մշակույթի տներ և մանկապատանեկան ստեղծագործության կենտրոններ	
4.	«Մշակութային միջոցառումների կազմակերպում»	Երևան քաղաքում պետական, ազգային տոների, մասնագիտական տոների, հիշատակի օրերի և այլ մասսայական միջոցառումների կազմակերպում և անցկացում՝ նվիրված Ամանորին, Մայրության	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: <b>ԵՔ-ՄԱԾՁԲ-19/121</b> <b>ԵՔ-ՄԱԾՁԲ-20/49-1,</b> <b>ԵՔ-ՄԱԾՁԲ-20/49-2, ԵՔ-ՄԱԾՁԲ-20/49-3, ԵՔ-ՄԱԾՁԲ-20/49-4, ԵՔ-ՄԱԾՁԲ-20/49-5, ԵՔ-ՄԱԾՁԲ-20/49-6,</b>	Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ 29.11.2019-05.01.2020թ. <b>2.</b> 1.«Երևանի Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ 05.03.2020-08.03.2020թ. 2.«Հայաստանի երգի	

		<p>և գեղեցկության տոնին, Թատրոնի միջազգային օրվան, Հայոց գեղասպանության գոհերի հիշատակի օրվան, Ջազի միջազգային օրվան, Պարի միջազգային օրվան, Թանգարանների միջազգային օրվան, Եվրոպական ժառանգության օրվան, «Վերջին զանգին», Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան, Գրադարանավարի օրվան, հայականավոր գործիչների և մտավորականների հիշարժան և հորելյանական տարեթվերին, Երևանի հիմնադրման՝ «Էրեբունի-Երևան» տոնակատարության, ինչպես նաև Երևան քաղաքի մշակութային միջավայրի պահպանման, զարգացման, հանրահռչակման, երեխաների և պատանիների գեղարվեստական զարգացման, գեղագիտական դաստիարակության, երիտասարդության և տարբեր տարիքային խմբերի մշակութային ժամանցի կազմակերպման՝ Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ-փառատոն, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես-փառատոն, «Երևանյան ամառ»,</p>	<p><b>ԵՔ-ՄԱՍՁԲ-20/49-7, ԵՔ-ՄԱՍՁԲ-20/49-8, ԵՔ-ՄԱՍՁԲ-20/49-9, ԵՔ-ՄԱՍՁԲ-20/49-10, ԵՔ-ՄԱՍՁԲ-20/49-11, ԵՔ-ՄԱՍՁԲ-20/49-12, ԵՔ-ՄԱՍՁԲ-20/49-13, ԵՔ-ՄԱՍՁԲ-20/49-14, ԵՔ-ՄԱՍՁԲ-20/49-15, ԵՔ-ՄԱՍՁԲ-20/49-16, ԵՔ-ՄԱՍՁԲ-20/49-17 ԵՔ-ՄԱՍՁԲ-20/61</b></p> <p>Ամանորյա միջոցառումների շրջանակում 2019 թվականի վերջին օրը մայրաքաղաքի Հանրապետության հրապարակում իրականացվել է համերգային ծրագիր, որին մասնակցեցին «Գարիկ-Մոնա» բենդն ու աշխարհոչակ երաժիշտ Գորան Բրեգովիչը:</p> <p>Ուղիղ կեսգիշերին շքեղ հրավառությունը լուսավորեց Երևանի երկինքը:</p> <p>Մինչև 2020թ, հունվարի 13-ը Երևանի հիմնադրման 2750-ամյակի շատրվանների պուրակում կազմակերպվել է Ամանորյա տոնավաճառ, որի շրջանակում իրականացվեցին համերգային ծրագրեր՝ ելույթ ունեցան հանրապետության լավագույն կատարողները, ստեղծագործական կոլեկտիվները:</p> <p>«Կանանց տոնի» շրջանակներում մարտի 8-ին Երևանի տարբեր մշակութային կազմակերպություններում իրականացվեցին տոնական միջոցառումներ, որոնց ընթացքում</p>	<p>պետական թատրոն» ՊՈԱԿ 05.03.2020թ.-08.03.2020թ.</p> <p>3.«Ա. Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» ՊՈԱԿ 05.03.2020թ.-08.03.2020թ.</p> <p>4.«Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն» ՊՈԱԿ 05.03.2020թ.-08.03.2020թ.</p> <p>5.«Պետական կամերային երաժշտական թատրոն» ՊՈԱԿ 05.03.2020թ.-08.03.2020թ.</p> <p>6.«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ 05.03.2020թ.-08.03.2020թ.</p> <p>7.«Երևանի կամերային պետական թատրոն» ՊՈԱԿ 05.03.2020թ.-08.03.2020թ.</p> <p>8.«Երևանի խամաճիկների պետական թատրոն» ՊՈԱԿ 05.03.2020թ.-08.03.2020թ.</p> <p>9.«Կինոթատրոն Մոսկվա» ՄՊԸ 05.03.2020թ.-08.03.2020թ.</p> <p>10.«Մհեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» ՀՈԱԿ 05.03.2020թ.-08.03.2020թ.</p> <p>11.«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ 05.03.2020թ.-08.03.2020թ.</p>	
--	--	---	---	--	--

		<p>«Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոն, «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոն, Երևանի օրերը Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում:</p>	<p>շուրջ 8000 հանդիսատես հնարավորություն ունեցավ անվճար այցելելու թատերահամերգային կազմակերպություններ:</p> <p>Արտակարգ դրության իրավական ռեժիմի պայմաններում իրականացվեց Հայոց ցեղասպանության 105-րդ տարելիցին նվիրված 10 ժամ տևողությամբ համերգային ծրագիրը, որի տեխնիկական սպասարկումն իրականացվել է Երևանի քաղաքապետարանի կողմից: Նշված միջոցառմանը մասնակցեցին շուրջ 160 անհատ երաժիշտներ, նվագախմբեր, երգչախմբեր:</p> <p>Երկրում համավարակի և Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով՝ արտակարգ դրության, կարանտինի, ռազմական դրության իրավական ռեժիմի գործողությամբ պայմանավորված մի շարք մշակութային միջոցառումներ տեղի չեն ունեցել, մասնավորապես՝ Թատրոնի միջազգային օրվան, Ջազի միջազգային օրվան, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումները, «Էրեբունի Երևան տոնակատարությունը», Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ-փառատոնը, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես-փառատոնը:</p>	<p>12.«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և Բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ 05.03.2020թ.-08.03.2020թ.</p> <p>13.«Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ 05.03.2020թ.-08.03.2020թ.</p> <p>14.«Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ 05.03.2020թ.-08.03.2020թ.</p> <p>15.«Կ.Ս.Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ 05.03.2020թ.-08.03.2020թ.</p> <p>16.«Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ 05.03.2020թ.-08.03.2020թ.</p> <p>17.«Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոն» ՊՈԱԿ 05.03.2020թ.-08.03.2020թ.</p> <p>3.«Լայթ լայֆ» ՍՊԸ 22.04.2020թ.-24.04.2020թ.</p> <p>Մշակույթի վարչություն և Արարատյան Հայրապետական թեմ</p>	
--	--	--	--	--	--

			4. Բուն Բարեկենդանի տոնի առթիվ Երևանի քաղաքապետարանը և Արարատյան Հայրապետական թեմը կազմակերպել են տոնական միջոցառում: Միջոցառումն անցկացվել է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցում:		
5.	Արտադպրոցական կազմակերպությունների համար գույքի ձեռքբերման ծրագիր	Նախնական մասնագիտական կրթության ժամանակակից պահանջներին համապատասխան գույքով և երաժշտական գործիքներով ապահովում: Նախատեսվում է ձեռք բերել մոտ 150 անուն նոր գործիք:	Ծրագիրը չի իրականացվել երկրում համավարակի և Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով՝ արտակարգ դրության, կարանտինի, ռազմական դրության իրավական ռեժիմի գործողությամբ պայմանավորված:	Մշակույթի վարչություն	
6.	Արտադպրոցական դաստիարակություն» երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման կազմակերպում: Ծրագիրը գործում է 2007 թվականից, որի արդյունքում նշված դպրոցներում բացվել են ազգային նվագարանների նոր դասարաններ խթանելով ազգային գործիքների պահպանմանը, զարգացմանը և տարածմանը, ինչպես նաև ծրագրի արդյունքում կարևորվում է դասական երաժշտական՝ լարային և փողային գործիքների պրոպագանդան: Ծրագրի շրջանակում սովորում են 610 երեխա, որից՝ 328-ը ազգային, 143-ը լարային և 139 փողային	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման կազմակերպումն իրականացվել է տարեսկզբից մինչև 2020թ. մարտի 14-ը, որից հետո արտակարգ դրությամբ և համավարակի տարածման կանխարգելման միջոցառումներով պայմանավորված՝ երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցումն իրականացվել է հեռավար եղանակով: Ուսումնական գործընթացը վերսկսվել է սեպտեմբերի 15-ից:	Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներ	

7.	Գրադարանային ծառայություն	<p>նասարաններում:</p> <p>Բնակչության գրադարանային տեղեկատվության տրամադրում և սպասարկում, գիտության և մշակութային լուսաբանում ու մասսայականացում, գիտատեխնիկական գիտելիքների տարածում, գեղագիտական դաստիարակություն, կրթական համակարգի օժանդակում, համաշխարհային և հայ գրականության, պատմության, մշակութային և այլ արժեքների տարածում, բնակչության ազատ ժամանցի կազմակերպում:</p>	<p>Համայնքային գրադարանները գործել են տարեկան մինչև 2020թ. մարտի 14-ը, որից հետո, արտակարգ դրությամբ և համավարակի տարածման կանխարգելման միջոցառումներով պայմանավորված համայնքային գրադարանները դադարեցրել են աշխատանքը: ՀՀ պարետի 2020թ. օգոստոսի 18-ի N 253-Ն որոշման համաձայն՝ 2020թ. օգոստոսի 19-ից վերսկսել է գրադարանների գործունեությունը: Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում իրականացվել են հետևյալ ծրագրերն ու դասընթացները՝ «ԱՐԵՎ», «Ընտանեկան գրադարանավար», «KOHA», «ELGRAD», WEB ծրագրավորման դասընթացներ, WEB դիզայնի և օտար լեզուների ուսուցման դասընթացներ:</p> <p>Երկրում համավարակի և Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով՝ արտակարգ դրության, կարանտինի, ռազմական դրության իրավական ռեժիմի գործողությամբ պայմանավորված Իսահակյանի գրադարանի հիմնադրման 95-ամյակին նվիրված միջոցառումները չեն կայացել:</p> <p>2020 թվականի սեպտեմբերի 18-ին</p>	Երևանի ենթակայության գրադարաններ	
----	---------------------------	---	---	----------------------------------	--

			«Ավ. Իսահակյանի անվան ԿԳ» ՀՈԱԿ-ի Տիգրան Մեծ պ. 30 հասցեում գտնվող մասնաճյուղում՝ «Դոմ Մոսկվի» մոսկովյան մշակութագործարարական կենտրոնի հետ համատեղ, բացվեց «Ռուսական կենտրոն» բաժինը:		
8.	Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	Երևանի պատմամշակութային ժառանգությունը, հայկական կենցաղն ու մշակույթը, անցյալի և ներկայի արվեստի ստեղծագործությունները, ակնավոր գործիչների կյանքն ու գործունեությունը ներկայացնող ցուցադրությունների կազմակերպում, բնագավառին առնչվող գիտական, կրթական գործունեության իրականացում, թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանում, հայտնաբերում, ուսումնասիրություն, թանգարանային ֆոնդերի համալրում, թանգարանային ֆոնդերի գիտական ուսումնասիրությունների իրականացում, նոր ցուցադրությունների կազմակերպում՝ ընդգրկելով պետական, ազգային տոներին, հիշարժան տարեթվերին նվիրված այլ միջոցառումներ և ցուցադրություններ:	Երևանի ենթակայության թանգարանները իրենց գործունեությունն իրականացրել են տարեսկզբից մինչև 2020թ. մարտի 14-ը, որից հետո, արտակարգ դրության իրավական ռեժիմի գործողության ժամկետում՝ Երևանի ենթակայության թանգարանները չեն գործել: Միաժամանակ՝ թանգարանները առցանց եղանակով իրականացրել են տարբեր կրթական, ճանաչողական, հանրահռչակման ծրագրեր: ՀՀ պարետի 2020թ. օգոստոսի 18-ի N 253-Ն որոշման համաձայն՝ 2020թ. օգոստոսի 19-ից վերսկսվել է թանգարանների գործունեությունը: «Էրեբունի» ամբոցի տարածքում իրականացվել են արգելափակոցի և այցելուների համար նախատեսված սանհանգույցի տեղադրման աշխատանքներ, «Կարմիր բլուր» հնավայրում ստեղծվել է նոր և ժամանակակից պահակակետ, որը հազեցած է համապատասխան կահույքով և տարածքի հսկողության համար նախատեսված գույքով: Իրականացվել են լուսավորության	Երևանի ենթակայության թանգարաններ	



			<p>համակարգի տեղադրման աշխատանքները, ինչը մեծապես նպաստել է հուշարձանում գիշերային ժամերին առավել արդյունավետ հսկողության իրականացմանը:</p> <p>Հնավայրի տարածքից տարհանվել է շուրջ 1200 թափք շինարարական աղբ, մաքրվել է 3.8 հա տարածք: Ստեղծվել են Կարմիր բլուրի ուրարտական միջնաբերդի, կարասային սրահի, տաճարական հատվածի, միջնաբերդի դարպասների, բազմասեկցիոն կառույցի եռաչափ մոդելները, որը հանրահռչակվում է զբոսաշրջային տարբեր հարթակներում:</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում «Շենգավիթ» հնավայրի տարածքում տեղադրվել է 4 լուսարձակներ, ինչպես նաև առաջին եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) եռաչափ ցուցանակը:</p> <p>Էրեբունի թանգարանի ժամանակավոր ցուցադրությունների սրահում դեկտեմբերի 26-ից իրականացվել է ժամանակավոր ցուցադրություն՝ «Հին Հայաստանի լուռ վկաները. վերածնունդ և վերարժևորում» խորագրով՝ նվիրված Հին Հայաստանի քարե քանդակներին, զինագործությանը և մետաղագործությանը:</p> <p>Ցուցադրությանը առկա է հատուկ անկյուն՝ տեսողության խնդիրներ</p>		
--	--	--	---	--	--

			<p>ունեցող անձանց համար, որտեղ վերջիններս հնարավորություն ունեն շոշափել ցուցադրությունում ներկայացված 2 առարկաներ, ինչպես նաև՝ Երևանի ծննդյան վկայականը համարվող սեպագիր արձանագրության նմանօրինակները և բրայլի համակարգով կարդալով տեղեկատվություն ստանալ դրանց մասին:</p> <p>Երևան քաղաքի պատմության թանգարանը կազմակերպել է տարագի համալիրի (36 առարկա)՝ ցուցադրություն «Տաշիր Մթրիթ» կենտրոնում (27-փետրվար-7 սեպտեմբեր), 2020թ. հունիսի 1-ին «Լուսավոր ձեր աշխարհում» երեխաների նկարների առցանց ցուցահանադեսը, որին մասնակցել են 46 փոքրիկ նկարիչներ, ներկայացվել են մոտ 100 աշխատանքներ:</p> <p>Երևան քաղաքի պատմության թանգարանը իրականացրել է «Մարդը և քաղաքը» խորագրով լուսանկարների հեռահար ցուցադրությունը, «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի շրջանակում առանձին ստենդով մասնակցել է Չինաստանի Գուանչժո քաղաքում իրականացվող էքսպոզիցիան, որտեղ ներկայացվել են Երևան քաղաքի պատմության թանգարանի լուսանկարները (25-27 սեպտեմբերի): Թանգարանի հնագիտության ֆոնդից</p>		
--	--	--	--	--	--

			<p>մինչ այժմ չցուցադրած իրերի վիրտուալ ցուցադրություն՝ ուղեկցող բացատրագրով «Խեցեղեն» թեմայով: Սեպտեմբերի 1-ից մեկնարկել է «Բացահայտիր Երևանի պատմության թանգարանի հավաքածուները» առցանց ծրագիրը, որտեղ ներկայացվել են հնագիտական բազմաթիվ առարկաներ, միջնադարյան Երևանը ներկայացնող առարկաների լուսանկարներ և տեղեկատվություն:</p> <p>Ժամանակակից արվեստի թանգարանում 2020թ. հունվարի 15-ից փետրվարի 29-ը ՀՀ-ում Իտալիայի դեսպանատան հետ համատեղ իրականացվել է ճանաչված իտալացի նկարիչ Կարլո Մոնտարսոլի «Լույսը, հնչյունը և գույնը» խորագիրը կրող անհատական ցուցահանդեսը:</p> <p>2020թ. հոկտեմբերի 20-ից Ժամանակակից արվեստի թանգարանում գործում է reminiscence խորագրով ցուցահանդեսը, որը ներկայացնում է Թաթուլ Առակյանի 30 տարվա հավաքածուն:</p> <p>2020թ. դեկտեմբերի 25-ին Ժամանակակից արվեստի թանգարանում ԱՐՏ PR ընկերության հետ համատեղ մեկնարկեց Սուրեն Սարումյանի «ՖՈՏՈ-ԱՐՅԱԽ» ցուցահանդեսի բացումը, որն իրենից ներկայացնում է Արցախի աշխարհի բացառիկ վավերագրություն:</p>		
--	--	--	--	--	--

			<p>Կարեն Դեմիրճյանի թանգարանում կազմակերպվել են առցանց ցուցահանդեսներ, սեպտեմբերի 16-ին թանգարանի բացօթյա սրահում Նոր Նորքի Հայորդաց տան սաների հետ համատեղ կազմակերպվել է «Ֆրանկոֆոնիա» խորագրով ցուցահանդես, որտեղ ներկայացվել են նկարչական դասարանի սաների աշխատանքները: Եվրոպական ժառանգության օրերի շրջանակում, կազմակերպել է «Շտրիխ Արտ» ստուդիայի հետ համատեղ գեղանկարների ցուցահանդես, որը կրում էր «Արվեստի կրթող անսպառ ուժը» խորագիրը: Ցուցահանդեսին ներկայացվել են ստուդիայի սաների ավելի քան 60 գեղանկարներ, որը ցուցադրվել է նաև օնլայն տարբերակով:</p> <p>«Ֆրիտյոֆ Նանսենի անվան թանգարանում» Երևանի «Քվանտ» վարժարանի սաների հետ համատեղ փետրվարի 23-ին անցկացվել է «Ֆրիտյոֆ Նանսեն՝ մեծ մարդասերը» խորագրով բաց դաս, իրականացվել են մի շարք միջոցառումներ, դասախոսություններ, ի աջակցություն Տավուշի մարզի Ազատամուտ համայնքի թանգարանը գրադարանին և համայնքի ընթերցասեր բնակիչներին նորվեգացի բևեռախույզ, մեծ մարդասեր և հայասեր Ֆրիտյոֆ</p>		
--	--	--	--	--	--

			Նանսենի կյանքը, գիտական, հասարակական, մարդասիրական գործունեությունը պատմող 40 օրինակ գիրք նվիրեց: 2020թ. ընթացքում օնլայն հարթակում գործել է Ֆրիտյոֆ Նանսենին նվիրված տարբեր ցուցահանդեսներ: 2020թ. նոյեմբերի 5-ից մինչ օրս թանգարանում գործում է ցուցահանդես-վաճառք, որից ստացված ամբողջ հասույթը փոխանցվում է Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին:		
9.	«Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ի վերակառուցման-արդիականացման ծրագիր	Էրեբունի հնավայրի վերականգնում	Ծրագիրը չի իրականացվել երկրում համավարակի և Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով՝ արտակարգ դրության, կարանտինի, ռազմական դրության իրավական ռեժիմի գործողությամբ պայմանավորված:	Մշակույթի վարչության «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ	
10.	Թատերական ներկայացումներ	Բնակչությանն ազգային թատերարվեստի լավագույն նմուշների ներկայացում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում, թատրոնների խաղացանկերի համալրում՝ յուրաքանչյուր թատերաշրջանի ընթացքում 10 նոր և վերականգնված ներկայացմամբ, ստեղծագործական կազմերի համալրում, ազգային թատերարվեստի լավագույն նմուշների ներկայացում, դասական	Երևանի ենթակայության թատրոնները գործել են տարեսկզբից մինչև 2020թ. մարտի 14-ը, որից հետո, արտակարգ դրության իրավական ռեժիմի գործողության ժամկետում՝ Երևանի ենթակայության թատրոնները դադարեցրել են աշխատանքը: Պարետի 2020թ. մայիսի 3-ի հ.63 որոշման համաձայն՝ թատրոններում մեկնարկել են աշխատանքները՝ փորձերի իրականացման (մինչև 7 հոգի) ձևաչափով: Առողջապահության նախարարի 2020թ. օգոստոսի 4-ի հ.17-Ն հրամանի	Երևանի ենթակայության թատրոններ	

		<p>և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում, ներկայացումների որակի բարձրացում, համապատասխան բեմերի, լուսային և ձայնային տեխնիկայի վերազինման աշխատանքների իրականացում, մասնակցություն հանրապետական և միջազգային փառատոներին:</p>	<p>համաձայն՝ Երևանի ենթակայության թատրոնները վերսկսել են աշխատանքը:      «Մհեր Մկրտչյանի անվան» արտիստական թատրոնում բեմադրվել են «Մոխրոտը», «Երկարագուլպա Պեպպին», «Ամեն գող գող չէ», «Կամակոր կնոջ սանձահարումը», «Ձախորդ Փանոսի կտակը», «Չառլիի մորաքույրը», «Հրաշք որոնելիս», «Սիրում եմ քեզ», «Մի կաթիլ հեքիաթ», «Մի համեստ դիակ» ներկայացումները:      Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում բեմադրվել են «Տիկնայք և պարոնայք», «Վերջին ծաղրածուն», «Սերը տարիք չի հարցնում» ներկայացումները:      Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնում բեմադրվել են «Գեղեցկուհին և հրեշը», «Ջրահարսը», «Վերջին ուսուցիչը», «Հիշիր վաղվա օրդ», «Կարմրամորթը», «Մատնաչափիկը» ներկայացումները, ինչպես նաև մի շարք առցանց ներկայացումներ՝ «Վերջին ուսուցիչը», «Շունն ու կատուն», «Փայտե մարդը», «Մեղրի համը»:      Երկրում համավարակի և Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով՝ արտակարգ դրության, կարանտինի, ռազմական դրության իրավական ռեժիմի գործողությամբ պայմանավորված թատրոնների</p>		
--	--	---	---	--	--

			կողմից նախատեսված մի շարք ծրագրեր չեն իրականացվել:		
11.	Կենդանաբանական այգու ցուցադրություններ	Նախատեսվում է «Երևանի կենդանաբանական այգու մյուս կենդանիների պահպանում, Կարմիր գրքում գրանցված և վերացող կենդանիների բազմացում ու ցուցադրում: Այգու աշխատանքներ են տարվում կենդանիների բնական աճի ավելացման, նոր կենդանիների ձեռքբերման և փոխանակման միջոցով նոր տեսականիով ապահովելու նպատակով: Այգին նաև զբոսանքի և ժամանցի յուրատեսակ վայր է, որը հնարավորություն է ընձեռում այցելուներին ծանոթանալու վայրի բնաշխարհին, իրականացնում է մշակութային-լուսավորչական գործառույթ՝ այցելուներին տալիս է ինչպես բնապահպանական դաստիարակություն, այնպես էլ ձևավորում է շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար և մարդասիրական վերաբերմունք:	«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը գործել է տարեսկզբից մինչև 2020թ. մարտի 14-ը: Այնուհետև, արտակարգ դրությամբ և համավարակի տարածման կանխարգելման միջոցառումներով պայմանավորված «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը չի գործել: «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը վերսկսել է իր աշխատանքը 2020թ. մայիսի 18-ից՝ համաձայն Պարետի 2020թ. մայիսի 3-ի հ.63 որոշման: 2020 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք վերանորոգման աշխատանքներ՝ ուղտերի ազատավանդակին հարակից խաղահրապարակի, գետաձիու ազատավանդակի ջրահեռացման համակարգի, առյուծների ազատավանդակի տանիքի և միջանցիկ դռան, կապիկների ազատավանդակի արգելապատնեշի, ինչպես նաև Եվրոպական եղնիկերի ազատավանդակի ճաղավանդակների պատրաստում և տեղադրում, կապիկների ազատավանդակում դարակների պատրաստում, տեղադրում, ջրային համակարգի վերանորոգում, ձմռանն այցելուների մուտքն ապահովելու նպատակով փղի	«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ	

			<p>պահման համար նախատեսված փակ տարածքի ամբողջովին նոր վերանորոգում, պատուհանների տեղադրում, այգու տարածքում առկա 4 սանհանգույցների վերանորոգում, համապատասխան սարքավորումների տեղադրում:</p> <p>Երևանի կենդանաբանական այգին համավարակի պայմաններում կազմակերպել է մի շարք օնլայն կրթական ծրագրեր: 2020թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Արցախից ժամանած երեխաների համար Այգին ապահովել է անվճար մուտք, ինչպես նաև 2020թ. դեկտեմբերի 31-ին Այգու մուտքը բոլորի համար անվճար է եղել:</p>		
12.	Երաժշտարվեստի և պարարվեստի համերգների կազմակերպում	Նախատեսվում է համերգային ծրագրերի կազմակերպում, օժտված երեխաների ստեղծագործական, կատարողական ձեռքբերումների, դեբյուտային ստեղծագործական աշխատանքների ներկայացում, միջոցառումների և մրցույթների, այդ թվում՝ համաքաղաքային, հանրապետական, միջազգային մրցույթների, փառատոների կազմակերպում և միջազգային մրցույթներին, փառատոներին մասնակցության ապահովում:	<p>Երաժշտարվեստի և պարարվեստի համերգների կազմակերպման հաստատությունները՝ մանկական ֆիլհարմոնիաները, «Երևան» փողային նվագախումբը, «Հայ-Արտ» մշակութային կենտրոնը իրենց գործունեությունն իրականացրել են մինչև ա/թ մարտի 14-ը, որից հետո, արտակարգ դրությամբ և համավարակի տարածման կանխարգելման միջոցառումներով պայմանավորված՝ նշված հաստատությունները չեն գործել:</p> <p>Առողջապահության նախարարի 2020թ. օգոստոսի 4-ի հ.17-Ն հրամանի համաձայն՝ Երևանի ենթակայության երաժշտարվեստի և պարարվեստի</p>	«Երևան» փողային նվագախումբ ՀՈԱԿ, «Հայ-Արտ մշակութային կենտրոն» ՓԲԸ, «Հայաստանի Փոքրիկ երգիչներ» մանկական Ֆիլհարմոնիա» ՀՈԱԿ, «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա» ՀՈԱԿ	



			համերգների կազմակերպման հաստատությունները վերսկսել են աշխատանքը:		
<b>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ և ԲԱՐԵՎԱԳՈՒՄ</b>					
1.	Փողոցների բարեկարգում	<p>Մայրաքաղաքի փողոցների, մայրուղիների, հրապարակների, բակային տարածքների և այլ ասֆալտապատման կարիք ունեցող տարածքների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքների իրականացում քաղաքի կայուն և համաչափ զարգացման գերակա սկզբունքի համատեքստում՝ բոլոր վարչական շրջաններում, շեշտը դնելով ծայրամասային վարչական շրջանների վրա: Կիրականացվեն նաև ճաքալցման աշխատանքներ պոլիմերային և բիտումոպոլիմերային մածուցիկ նյութերով, որը էապես երկարացնում է ասֆալտբետոնե ծածկի ծառայության ժամկետը և հողային պաստառով (գրունտային) ճանապարհների հիմնանորոգման, ասֆալտապատման աշխատանքներ:</p> <p>Նախատեսվում է շարունակել մայրերի, եզրաքարերի և հենապատերի վերանորոգման, թեքահարթակների կառուցման աշխատանքները, իրականացնել մայրերի զավթած հատվածների ազատման և նոր մայրերի կառուցման աշխատանքները:</p>	<p><b>1.1 ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/2-1</b>  <b>1.2 ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/2-2</b>  <b>1.3 ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/2-3</b>  <b>1.4 ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/2-4</b>  <b>1.5 ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/2-5</b>  <b>1.6 ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/2-6</b>  <b>1.7 ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/2-7</b>  <b>1.8 ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/2-8</b>  <b>1.9 ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/7</b>  <b>2. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/44</b>  <b>3. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/27</b>  <b>4.1 ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/5</b>  <b>4.2 ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/5</b>  <b>5.ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/106</b>  <b>6. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/6</b>  <b>7. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/150</b></p> <p>1.1-1.9 Երևան քաղաքի փողոցների, մայրերի և բակային տարածքների ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման, փոսային նորոգման և ճաքալցման աշխատանքներն ավարտվել են, կատարվել է թվով 370 փողոցներում և թվով 73 մայրերի ու բակային տարածքների ընդհանուր՝ 566686 քմ ասֆալտապատման, փոսային նորոգման աշխատանքներ, թվով 45 փողոցներում իրականացվել են 402207 գծմ ճաքալցման աշխատանքներ,</p> <p>2.Գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներն</p>	<p>1.1 «Խաչձար» ՍՊԸ 28.02-01.11.20թ.  1.2. «Արհովշին» ՍՊԸ 26.02-25.12.20թ.  1.3. «Շինպլուս» ՍՊԸ 21.02-01.11.20թ.  1.4. «Նարիմանյան» ՍՊԸ 28.02-01.11.20թ.  1.5. «ԱՎԱ-2000» ՍՊԸ 28.02-25.12.20թ.  1.6. «Կապավոր» ՍՊԸ 21.02-01.11.20թ.  1.7. «Լիլիթ-87» ՍՊԸ 27.02-01.11.20թ.  1.8. «Նարիմանյան» ՍՊԸ 28.02-01.11.20թ.  1.9«Վահագն և Սամվել» ՍՊԸ, 06.03.-01.09.20թ.  2. «Եղիսաբեթ Ալմազյան» Ա/Ձ 03.03.20- 14.06.20թ.  3.«ՎԱՂԺԱՆ» ՍՊԸ 23.04. -22.07.20թ.  4.1.«ՋԻԹԻԷՄ ԳԲՈՒՊ» ՍՊԸ 25.02.-31.10.20թ  4.2. «Սասունասար» ՍՊԸ 12.08-01.12.20թ.  5.«Կառլեն Սուրենի</p>	

			<p>ավարտվել են, կատարվել է 12083 քմ աֆալտապատում:</p> <p>3.Ավարտվել են Նորագավիթի 1-ին փողոցի կամրջի հարևանությամբ գտնվող տարածքի բարեկարգման աշխատանքները</p> <p>4.1-4.2 Ավարտվել են Հակոբ Հակոբյան փողոցի վերանորոգման աշխատանքները:</p> <p>5. Ավարտվել են մայթերի սալիկապատման աշխատանքները:</p> <p>6. «Գլենդել Հիլզ» թաղամասից դեպի Գր.Լուսավորչի և Արգիշտի փողոցներ տանող ճանապարհահատվածի մայթի կառուցման աշխատանքներն ավարտվել են</p> <p>7. Ավարտվել են Նուբարաշենում բետոնե արգելապատնեշների տեղադրման աշխատանքները</p>	<p>Ռոստոմյան» Ա/Ձ 28.09.-15.12.20թ.</p> <p>6.«Էկոմֆորտ Բիլդինգ» ՍՊԸ, 21.02.-30.06.20թ.</p> <p>7.«Անդրանիկ Մելունյան Հրաչիկի» Ա/Ձ, 10.11-25.12.20թ.</p>	
2.	Հանգստի գոտիների և բակային տարածքների բարեկարգում	Նախատեսվում է հանգստի գոտիների պահպանում, բարեկարգում, նորերի կառուցում, բակային տարածքների կահավորում մանկական խաղերով և մարզասարքերով: Բոլոր վարչական շրջանների բակային տարածքներում կառուցել խաղահրապարակներ և մինի-ֆուտբոլի դաշտեր, ապահովել դրանց շահագործման անվտանգությունը և պահպանումը	<p><b>1. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/42</b></p> <p><b>2. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/42</b></p> <p><b>3. ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-20/1</b></p> <p><b>4. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/98</b></p> <p><b>5. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/93</b></p> <p>1.Մ.Սարյանի պուրակի վերականգնման շինարարական աշխատանքներն ավարտվել են, աղբամանների և նստարանների ձեռքբերման ու տեղադրման աշխատանքներն կիրականացվեն 2021թ. ծրագրերի շրջանակներում:</p>	<p>1. «Հարսնաձոր» ՍՊԸ 22.06.-31.08.20թ.</p> <p>2.«Հարսնաձոր» ՍՊԸ 22.06.-31.08.20թ.</p> <p>3.«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ 30.06-01.10.20թ.</p> <p>4.«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ 06.07-30.11.20թ.,</p> <p>5.«Բեստ-Քոնսթրաքշն» ՍՊԸ 10.08-20.12.20թ.</p>	

			<p>2.Քանաքեռ ՀԷԿ զբոսայգու բարեկարգման շինարարական աշխատանքներն ավարտվել են, աղբամանների և նստարանների ձեռքբերման ու տեղադրման, ինչպես նաև լուսատուների տեղադրման, մալուխագծերի անցկացման աշխատանքներն կիրականացվեն 2021թ. ծրագրերի շրջանակներում:</p> <p>3.Օղակաձև 6-րդ հատվածի բարեկարգման աշխատանքներն ավարտվել են, բացառությամբ աղբամանների և նստարանների տեղադրման աշխատանքներից, որի համար 2021թ. ծրագրերով կներկայացվի նոր գնման հայտ</p> <p>4.Նոր Արաբկիր զբոսայգու բարեկարգման աշխատանքների գնման հայտը ներկայացվել է առանց ֆինանսական միջոցների նախատեսման, աշխատանքները չեն իրականացվել:</p> <p>5.16-րդ թաղամասի 2-րդ շղթայի բակի բարեկարգման աշխատանքներն ավարտվել են</p>		
3.	Շենքերի բարեկարգում	Նախատեսվում է իրականացնել շենքերի ճակատային հատվածների ընթացիկ նորոգման, քարերի մաքրման, լվացման և ներկման աշխատանքներ, բազմաբնակարան շենքերի շքապատշգամբների	<p><b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/62</b></p> <p>Նուբարաշենի 11-րդ փողոցի հ.19 շենքի ամրացման աշխատանքների գնման հայտը ներկայացվել է առանց ֆինանսական միջոցների նախատեսման, աշխատանքները չեն</p>	«ԱԼ ԵՎ ԱԸ» ՍՊԸ 02.07-15.11.20թ.	

		քայքայված հատվածների վերանորոգման աշխատանքներ:	իրականացվել		
4.	Կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական և մշակութային հաստատությունների շենքերում և բակային տարածքներում վերանորոգման աշխատանքներ	Ըստ անհրաժեշտության կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական հաստատությունների շենքերում ընթացիկ նորոգման, հարդարման, դռների և լուսամուտների փոխարինման, տանիքների, սանհանգույցների վերանորոգման, ջեռուցման/հովացման, օդափոխության և օդորակման, լուսավորության համակարգերի վերակառուցման աշխատանքների իրականացում: Նախատեսել վերականգնող էներգիայի աղբյուրների ինտեգրման, հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի հասանելիության ապահովումը, արևային ֆոտովոլտային կայանների և արևային ջրատաքացուցիչների կիրառումը:	<p>1. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58-2  2. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64-1  3. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64-4  4. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64-3  5. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/87-1  6. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58-1  7. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58-2  8. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/87-2  9. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64-2  10. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/87-1  11. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/58-2  12. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/151</p> <p>Մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքներն ավարտվել են, բացառությամբ հ.հ. 35, 97, 88 և 104 մանկապարտեզների, որոնք ավարտին կհասցվեն 2021թ-ին</p> <p>1. Աջափնյակի հ.35  2. Կենտրոնի հ.20  3. Կենտրոնի հ.21  4. Մալաթիա-Սեբաստիայի հ.76  5. Մալաթիա-Սեբաստիա հ.88  6. Մալաթիա-Սեբաստիա հ.90  7. Մալաթիա-Սեբաստիա հ.97  8. Նոր Նորքի հ.98  9. Նոր Նորքի հ.99  10. Նոր Նորքի հ.104  11. Նոր Նորքի հ.112  12. Քանաքեռ-Զեյթունի հ.150</p> <p>ջեռուցման համակարգի առանձնացում</p>	<p>1.«Գրիգորյան Շին» ՍՊԸ  01.06-30.11.20թ.</p> <p>2. «Բեստ Բիլդինգ» ՍՊԸ  04.08-02.12.20թ.</p> <p>3. «ԱԳԱԹ-777» ՍՊԸ  10.06-30.06.20թ.</p> <p>4. «Արարատշին» ՍՊԸ  08.05-30.11.20թ.</p> <p>5. «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ  25.06-30.08.20թ.</p> <p>6. «Արտ Պլաս» ՍՊԸ  07.07-31.08.20թ.</p> <p>7. Գրիգորյան Շին» ՍՊԸ  01.06-30.11.20թ.</p> <p>8. «Ազարակ» ԲԲԸ  26.06-15.12.20թ.</p> <p>9. «Բիդեք» ՍՊԸ  07.05-01.08.20թ.</p> <p>10. «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ  25.06-20.12.20թ.,</p> <p>11.Գրիգորյան Շին» ՍՊԸ  01.06-01.08.20թ.,</p> <p>12. «Բարսիս» ՍՊԸ  26.11.20թ.-10.01.21թ.</p>	

5.	Առողջապահական հիմնարկների վերանորոգում	Նախատեսվում է իրականացնել ընթացիկ նորոգման, հարդարման, դռների և լուսամուտների փոխարինման, տանիքների վերանորոգման աշխատանքներ:	<b>1. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/35-1</b> <b>2. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/35-2</b> <b>3. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/35-3</b> «Շտապօգնություն» ՓԲԸ-ի ենթակայանների հիմնանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են.  Արաբկիրի հ.1 Դավթաշենի հ.2 Էրեբունու հ.4	1. «ԷՄՕՇԻՆ» ՍՊԸ 20.04-01.08.20թ.  2. «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ 16.04-01.08.20թ.  3. «ԺԻԼՅՈ» ՍՊԸ 16.04-01.08.20թ.	
6.	Կամուրջների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայություններ	Նախատեսվում է իրականացնել կամուրջների և կամրջային կառույցների դեֆորմացիոն կարերի, ջրահեռացման խողովակների մաքրում, հենարանների և թռիչքային կառուցվածքների զննում, վնասվածքների դեպքում՝ վերանորոգում, բազրիքների, եզրաքարերի, լուսավորության սյուների և այլ էլեմենտների նորոգում, ներկում, երթնեկելի մասերի և մայթերի մաքրում, նորոգում:	<b>ԵՔ-ԲՄՕՁԲ-20/5</b> Թվով 41 կամուրջների պահպանման, շահագործման և ընթացիկ նորոգման ծառայություններն ընթացքի մեջ են	«Կամուրջշին» ՓԲԸ, 01.01.-25.12.20թ.	
7.	Վերգետնյա և ստոգետնյա անցումների վերանորոգում	Ավտոտրանպորտի ծանրաբեռնված երթնեկության պայմաններում քաղաքացիների անցուդարձը անվտանգ դարձնելու նպատակով անհրաժեշտ են հետիոտնային վերգետնյա և ստոգետնյա անցումներ, որի նպատակով իրականացվում են անցումների վերանորոգմանն, ինչպես նաև նոր անցումների կառուցման աշխատանքներ	Թվով 4 ստորգետնյա հետիոտնային անցումների վերանորոգման աշխատանքների համար պատվիրվել են նախագծա-նախահաշվային փաստաթղթեր. 1.Գր.Լուսավորչի-Մաշտոց խաչմերուկի 2. Ազատության-Դավիթ Անհաղթ խաչմերուկի 3. Թամանցիների փողոցի 4. «Բարեկամություն» մետրոյի կայարանի 2 մուտքերի 5.«Փակ շուկա»-ի դիմաց	աշխատանքներ դեռ չեն իրականացվել	

8.	Ոռոգման ցանցերի կառուցում	Ոռոգման համակարգերի վերանորոգում, նոր ջրագծերի անցկացում:	<p>1. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/1  2. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/63-1  3. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/63-1  4. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/63-2  5. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/116  6. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/110-1  7. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/110-2</p> <p>1.«Հաղթանակ» զբոսայգու անտառապաշտպանիչ գոտու ստեղծում, ոռոգման ցանցի կառուցում  1-ին տեղամաս՝ <u>ավարտված</u>  2-րդ տեղամաս՝ <u>ավարտվել է</u>  3-րդ տեղամաս՝ <u>ավարտվել է</u></p> <p>2.Կոմիտասի անվան զբոսայգու խորքային հորի կառուցում-<u>ավարտվել է</u>  3. Ա.Միկոյանի փողոցում՝ «Դոմուս» Ա/կ հարակից տարածքի խորքային հորի կառուցում-<u>կշարունակվի 2021թ-ին</u>  4. №153 դպրոցի բակի արտաքին ոռոգման ցանցի կառուցում-<u>ավարտվել է</u>  5. Մարզահամերգային համալիրի 8.5հա տարաքի ոռոգման ցանցի կառուցում-<u>ավարտվել է</u>  6.«Էրերունի» պատմահնագիտական թանգարանի տարածքի ոռոգման ցանցի կառուցում-<u>ավարտվել է</u>  7. Իտալիայի, Բելյուրի և Վ.Սարգսյան փողոցների ոռոգման ցանց-<u>ավարտվել է</u></p>	<p>1.«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ  14.02.-12.06.20թ.</p> <p>2.«ՎԱՆԴ-ԳԱՍՍ» ՍՊԸ  27.05.-25.07.20թ.</p> <p>3.«ՎԱՆԴ-ԳԱՍՍ» ՍՊԸ  27.05.-24.08.20թ.</p> <p>4.«ԵԳԱՐՇԻՆ» ՍՊԸ  20.05.-08.07.20թ.</p> <p>5.«Բիդեք» ՍՊԸ  10.09.-25.12.20թ.</p> <p>6.«Բիդեք» ՍՊԸ  10.09.-25.12.20թ.</p> <p>7.«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ  11.09.-10.12.20թ.</p>	
9.	Հուշարձանների նորոգում	Հուշարձանների պատվանդանների քայքայված հատվածների ընթացիկ նորոգման աշխատանքներ:	<p><b>ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/8</b></p> <p>Նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում</p>	<p>«Վահ Գրիգ» ՍՊԸ  28.02-01.09.20թ.</p>	

			իրականացվել և ավարտվել են Մարշալ Բաղրամյանի հուշարձանի բարեկանգման աշխատանքները		
10.	Կոյուղագծերի կառուցում	Նոր կոյուղագծերի անցկացում:	<p><b>1. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/68</b></p> <p><b>2. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/79</b></p> <p><b>3. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/149</b></p> <p>1. Երևանի ՋԷԿ-ի հարևանությամբ գտնվող թափառող կանդանիների վարակազերծման կենտրոնի ջրահեռացման ցանցի կառուցում-<u>ավարտվել է</u></p> <p>2. Փիրումյան թաղամասի ջրահեռացման ցանցի կառուցման աշխատանքների գնման հայտը ներկայացվել է առանց ֆինանսական միջոցների նախատեսման, աշխատանքները <u>չեն իրականացվել</u></p> <p><u>3 Ավարտին են հասցվել 2019թ.</u> ծրագրերով իրականացվող Դավիթ Բեկ փողոցի հարակից թաղամասի կոյուղագծի կառուցման աշխատանքները</p>	<p>1. «ՍՏՐՈՒ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ 28.02.-01.09.20թ.</p> <p>2.«Շինմաստեր» ՍՊԸ 02.11.-25.12.20թ.</p> <p>3. «ՄԼԼ Ինդասթրիալ» ՍՊԸ 07.11-25.12.19թ.-30.06.20թ.</p>	Լրացուցիչ աշխատանքներ

**Տրանսպորտ**

1.	«Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի և միասնական տոմսային համակարգի ներդրում. նոր քաղաքային ավտոբուսների (հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված) ներկրման գործընթացի իրականացում»	Նոր երթուղային ցանցի և միասնական տոմսային համակարգի ներդրման աշխատանքների իրականացում (մեկնարկ), նոր ավտոբուսների (հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար) ներկրում	<p><b>1. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/20</b></p> <p>Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված մեկ այլ մրցույթում (նոր, փոքր դասի թվով 100 ավտոբուսներ ձեռք բերելու նպատակով), հաղթող ճանաչված կազմակերպության կողմից մայրաքաղաք է ներկրվել ավտոբուսների առաջին խմբաքանակը (28 հատ): Մնացած քանակությունը կներկրվի 2021թ. առաջին եռամսյակի ընթացքում:</p> <p>Երևանի ավտոբուսային պարկի համալրման նպատակով Երևանի</p>	<p>1. «Մուլտի Մոթորս» ՍՊԸ 25.09.2020թ.-31.03.2021թ.</p> <p>«Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ</p> <p>Տրանսպորտի վարչություն</p>	
----	--	---	--	---	--

			քաղաքապետարանի կողմից հայտարարվել է մրցույթ (այն հրապարակվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի պաշտոնական էջում)՝ միջազգային նորագույն չափանիշներին համապատասխան 100 ավտոբուսներ ձեռք բերելու համար, հաղթող չի ճանաչվել:		
2.	Մետրոպոլիտենի վագոնների արդիականացում	Թվով 8 վագոնների նորոգման և արդիականացման աշխատանքների իրականացում	81-717 տիպի 2 շարժակազմերի՝ ընդհանուր առմամբ թվով 8 անվասայլակների ստուգում դեֆեկտասկոպով և պնևմատիկ սարքավորումների նորոգման աշխատանքների իրականացում:	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	
3.	Մետրոպոլիտենի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում	Վերոնշյալ նպատակներն իրականացնելու համար նախատեսվում են. 1. Դեպոյի վերանորոգման արտադրամասի վերանորոգում: 2. Ազդանշանային և հեռահաղորդակցության համակարգի արդիականացում՝ թվային վերահսկման սարքով հագեցած ազդանշանային բլոկավորման համակարգի փոխարինում: 3. Կարգավարական կապի, թունելային կապի համակարգերի արդիականացում: 4. 6 կվ մալուխների փոխարինում, 825 Վ մալուխների փոխարինում, մետրոպոլիտենի բաց հատվածի լուսավորության հիմնանորոգում, գծային և փոքր մեխանիզացիայի արկղերի, հեռակառավարման բաժանիչների	Մետրոպոլիտենի 1-ին և 2-րդ գծերով փայտակոճերի փոխարինումով վերաբեռնավորման աշխատանքների իրականացում՝ ընդամենը 380.12 մետր (176.7 մետր + 203.42 մետր):	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	



		<p>վահանակների փոխարինում և արդիականացում, ռելեական պաշտպանության համակարգի արդիականացում, ՀՔԵ –ների վերանորոգում և արդիականացում:</p> <p>5. Նախատեսվում է գերավազքով աշխատող թվով 16 շարժասանդուղքների վերանորոգում:</p> <p>6. Նախատեսվում է օդափոխման համակարգի արդիականացում՝ օդափոխիչների փոխարինում և դրանց միացում թվային վերահսկման համակարգին:</p> <p>7. Թունելային հակահրդեհային և ջրամատակարարման խողովակաշարերի նորոգում:</p> <p>8. Նախատեսվում է ուղեգծերի սպասարկման և վերանորոգման աշխատանքներ՝ ռելսերի, զանազան պահեստամասերի ձեռքբերում, ռելսերի, փայտակոճերի փոխարինում:</p> <p>9. Նախատեսվում է Սարշալ Բաղրամյան կայարանի նախասրահի վերանորոգում, Սասունցի Դավիթ, Ջորավար Անդրանիկ կայարանների գծային պատերի հիմնանորոգում, կայարանների արտաքին տեսքի բարելավում:</p> <p>10. Նախատեսվում է ձեռք բերել նոր ավտոդրեզին, նորոգել և արդիականացնել շահագործվող ավտոդրեզինները, նորոգել մեխանիկական արտադրամասը, ավտոդրեզինների</p>			
--	--	---	--	--	--

		կայանատեղին, բեռնատար ավտոմեքենայի ձեռքբերում:			
4.	Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորների սպասարկման որակի և անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում	Ընդհանուր առմամբ 15000 մ երկարությամբ հպակային ցանցի վերանորոգման աշխատանքների իրականացում: Ընդհանուր առմամբ 2125 մ երկարությամբ մալուխների վերանորոգման աշխատանքների իրականացում: Նոր հպակային ցանցի (3000մ ընդհանուր երկարությամբ) կառուցման աշխատանքների իրականացում:	1.Արշակունյաց, Բագրատունյաց պողոտաներում, Ագաթանգեղոսի, Մարշալ Բաբաջանյան, Թևոսյան, Չարենցի, Կորյունի փողոցներում նորոգվել է 11680 մետր ընդհանուր երկարությամբ հպակային ցանց՝ նոր պղնձալարերով. 2. Մյասնիկյան պողոտայում, Էրեբունի, Արցախի, Արտաշիայան, Չելովի փողոցներում, Գ.Նժդեհի և Աշխատանքի հրապարակներում նորոգվել է 3130 մետր ընդհանուր երկարությամբ հպակային ցանց՝ նախկինում օգտագործված պղնձալարերով: 4. Մալուխների վերանորոգման աշխատանքների իրականացում՝ թվով 144 կցորդիչների տեղադրմամբ: 5. Տրոլեյբուսային հ.2 երթուղու ուղեգծի երկարացման նպատակով Շիրակի փողոցից մինչև Հ.Հովհաննիսյան փողոց անց է կացվել 959 մ ընդհանուր երկարությամբ նոր մալուխներ: 6. Սկսվել են տրոլեյբուսային հ.2 երթուղու ուղեգծի երկարացման նպատակով 3000 մետր ընդհանուր երկարությամբ նոր հպակային ցանցի կառուցման աշխատանքները:	«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ	
5.	Հետիոտնային կանչի լուսացույցների ձեռքբերում և տեղադրում	Մայրաքաղաքի մի շարք փողոցների կահավորում հետիոտնային կանչի լուսացույցներով՝ 26 հատ:	Հայտարարված մրցույթներում հաղթող ճանաչված թվով 2 կազմակերպությունների կողմից մշակվել են նախագծա-նախահաշվային փաստաթղթեր, համապատասխանաբար, թվով 26 և 37	Տրանսպորտի վարչություն  ՀՀ Ճանապարհային ոստիկանություն	

			լուսացույցների տեղադրման համար: Լուսացույցների տեղադրման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2021 թվականին, որի համար կկազմակերպվեն համապատասխան մրցույթներ:		
6.	Տրոլեյբուսի հպակային ցանցի տեղափոխում	Մյաննիկյան պողոտայում և Աճառյան փողոցում տրոլեյբուսի հպակային ցանցի տեղափոխման աշխատանքների իրականացում, ուղևորների անվտանգ և ապահով փոխադրում:	Կորոնավիրուսի համավարակի պատճառով ստեղծված իրավիճակում և ռազմական դրության պայմաններում ծրագիրը առաջնահերթ չի համալրվել և աշխատանքներ չեն իրականացվել:	«Երևանի էլեկտրա- տրանսպորտ» ՓԲԸ	
<b>ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ և ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ</b>					
1.	Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտման նախագծի մշակում՝ մինչև 2030 թվականը զարգացման հեռանկարով	Գլխավոր հատակագծի ճշգրտման և լրամշակման աշխատանքներ՝ • Երևանի 2005-2020թթ. Գլխավոր հատակագծի իրագործման գործողության ժամկետի մինչև 2030թ. երկարացում, • Երևանի մինչև 2030թ. քաղաքաշինական զարգացման հիմնական ուղղությունների հստակեցում, • քաղաքի համաչափ զարգացման ուղղությունները, • Կայուն զարգացման «ՌԻՕ+20» գազաթաժողովի որոշումների իրագործմանն ուղղված «Կայուն քաղաքներ և կանաչ ճարտարապետություն» միջոցառումների պլանավորում, • Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման կարգավորմանն ուղղված օրենքով նախատեսվելիք միջոցառումներ, • Երևանի ճանապարհափողոցային ցանցի	1.Երևան քաղաքի ավագանու կողմից ընդունվել է որոշում N302-Ս որոշում 22 դեկտեմբերի 2020թ. «Երևանի գլխավոր հատակագծի մինչև 2030 թվականը զարգացման ճշգրտման նախագծի մշակման աշխատանքների մասին» 2.Երևան քաղաքի ավագանու կողմից ընդունվել է որոշում N303-Ս որոշում 22 դեկտեմբերի 2020թ. «Երևանի գլխավոր հատակագծի մինչև 2030 թվականը զարգացման ճշգրտման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքը հաստատելու մասին»	Երևանի քաղաքապետի խորհրդական, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն- հետազայում մրցույթում հաղթող կազմակերպություն:	

		մինչև 2030թ. զարգացման հիմնական ուղղությունները և այլ:			
2.	Երևան քաղաքի ճանապարհափողոցային ցանցի մինչև 2030 թվականը զարգացման համալիր սխեմայի մշակում	Երևանի ճանապարհափողոցային ցանցի բարելավման ուղղությամբ կարևորվում է երեք հիմնական ուղղություններ՝ ա. քաղաքի կենտրոնի բեռնաթափում, բ. քաղաքի կենտրոնի ճանապարհափողոցային ցանցի բարելավում, գ. Երևանը շրջանցող մայրուղային ճանապարհների կազմակերպում:		Երևանի քաղաքապետի խորհրդական, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն, տրանսպորտի վարչություն և <i>հետագայում մրցույթում հաղթող կազմակերպություն</i>	Բյուջեով գումար չի նախատեսվել
3.	Երևանի Նոր Նորք վարչական շրջանի գոտևորման նախագծի մշակում	Ծրագրի նպատակն է մշակել Երևանի Նոր-Նորք վարչական շրջանի գոտևորման նախագիծը, որը քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է, և որով կսահմանվեն նշված տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ վարչական շրջանի ամբողջ տարածքում կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով: Նախագծային տարածքը՝ 1 449,8 հա	1. Այս աշխատանքը շարունակությունն է հանդիսանում սկսված դեռևս 2019թ. թեմայի, որի համար կնքվել է պայամանագիր «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի հետ 07.08.2019թ. <b>ԵՔ- N19/68 ԳՀԱՇՁԲ 20.07.2020թ.</b> 2. «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի 30.07.2020թ. հ.40/01-183, 20.08.2020թ. հ.40/01-200, գրություններով ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն է ներկայացվել հուլիս, օգոստոս ամիսներին կատարված աշխատանքների վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունները, հաշիվ-ֆակտուրաները և ակտերը: Մշակման աշխատանքներն ավարտվել են և դեռ ընթանալու են փորձաքննության և հանաձայնեցումների փուլերը:	Երևանի քաղաքապետի խորհրդական, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն, հաղթող <<Երևաննախագիծ>> ՓԲԸ 07.08.2019թ.-20.07.2020թ. (փոփոխվել է)	Երևանի Նոր Նորք վարչական շրջանի գոտևորման նախագծի մշակում

4.	Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի գոտևորման նախագծի մշակում	Ծրագրի նպատակն է մշակել Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի գոտևորման նախագիծը, որը քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է, և որով կսահմանվեն նշված տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման և կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ վարչական շրջանի ամբողջ տարածքում կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով: Նախագծային տարածքը՝ 1 724,0 հա:	ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 11-ի N1/Ս-1 դրական եզրակացության հիման վրա կայացվել է Երևան քաղաքի ավագանու 24.06.2020թ. N244-Ս որոշումը «Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի տարածքի գոտիավորման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքը հաստատելու մասին» Նախագծի մշակման աշխատանքները նախատեսվել են 2021թ.-ին	Երևանի քաղաքապետի խորհրդական, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն- հետազայում մրցույթում հաղթող կազմակերպություն	
5.	Երևան քաղաքի քաղաքաշինական կադաստրի ստեղծում և ներդրում	Ծրագրի նպատակն է Երևան քաղաքի քաղաքաշինական կադաստրի ստեղծումը և ներդրումը: Քաղաքաշինական կադաստրի ստեղծման և ներդրման ուղղությամբ տեխնիկական նախագծի մշակում:		Երևանի քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ- հետազայում մրցույթում հաղթող կազմակերպություն	Բյուջեով գումար չի նախատեսվել
6.	Երևանի Մոնթե Մելքոնյան փողոցի արևելյան հատվածի կառուցապատման կարգավորման նախագծի և Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա նախագծային մայրուղուն հարող տարածքի գոտևորման և կառուցապատման էսքիզային նախագծերի մշակում	Նախատեսվում է մշակել Երևանի Մոնթե Մելքոնյան փողոցի արևելյան հատվածի կառուցապատման կարգավորման նախագիծ և Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա նախագծային մայրուղուն հարող տարածքի (Պասկևիչի բլուրից հարավ) գոտևորման և կառուցապատման էսքիզային նախագիծեր, տվյալ գոտիներում միջավայրի կազմակերպման նպատակով:	1.Այս աշխատանքը դիտարկվելու էր կետ 12-ի հետ՝ Ծովակալ Իսակովի պողոտան Արշակունյաց պողոտային միացնող ավտոմայրուղու կառուցման ծրագրի հետ: 2.ՀՀ փոխվարչապետի 18.05.2020թ. N04/03.17/24574-2020 գրության հիմքով Երևանի քաղաքապետարանի ստորաբաժանումներում քննարկվել է՝ Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի Նորագյուղ թաղամասում «Միքս Թաուեր Սիթի Քորի» ընկերության կողմից	Երևանի քաղաքապետի խորհրդականի կողմից /համակարգվող ստորաբաժանումներ կազմակերպություններ ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն, Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման	Երևանի Մոնթե Մելքոնյան փողոցի արևելյան հատվածի կառուցապատման և կարգավորման նախագծի և Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա

		<p>Մոնթե Մելքոնյան փողոցի արևելյան հատվածի նախագծային տարածքը կազմում է 83,8 հա, Իսակով - Արշակունյաց պողոտա նախագծային մայրուղուն հարող տարածքը մոտ 64 հա:</p>	<p>ներկայացված նախնական առաջարկը ներդրումային ծրագրի մասին: /նայել նաև կետ 12-ում/ Երևանի քաղաքապետի 05.06.2020թ. հ.01/50-47922հ գրությամբ և ներկայացվել են դիտողություններն ու առաջարկները: Մոնթե Մելքոնյան փողոցի արևելյան հատվածում</p> <p>3. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում Ծիծեռնակաբերդի խճուղի թիվ 7 հողամասում հ.5/1 և հ.5/2 հասցեներում (Դավա Գարդեն մոլի և Դավայի այգիներին հարակից տարածքում) բնակելի թաղամասի հայեցակարգային էսքիզային առաջարկը Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական խորհրդի 14.10.2020թ. նիստում քննարկվել է, որի շրջանակներում խորհրդի որոշմամբ առաջարկվել է տվյալ գոտու տարբեր հողամասերում առանձին-առանձին օբյեկտների մասով հաստատված քաղաքաշինական փաստաթղթերից, որպես նախագծման ելակետային տվյալներ տրամադրել համապատասխան նյութերը նախագծողին, տարածքների քաղաքաշինական վերլուծություն կատարելու, համալիր գնահատական ու ընդհանրական փաթեթ կազմելու համար: Ելակետային նախնական նյութերը տրամադրվել են, որի հիման վրա կազմվել է էսքիզային մակարդակով նյութ և այն փոխանցվել է «Երևաննախագիծ» ՓԲԸ-ին:</p>	<p>գրասենյակի» ՀՈԱԿ, «Երևաննախագիծ» ՓԲԸ</p>	<p>նախագծային մայրուղուն հարող տարածքի գոտևորման և կառուցապատման էսքիզային նախագծերի մշակում</p>
7.	Երևան քաղաքի Մբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցուն և	Երևան քաղաքի Մբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցուն և	Աշխատանքներն այս ծրագրի ուղղությամբ սկսվել են 2019թ.-ից, որի	Երևանի քաղաքապետարանի	

<p>Երվանդ Քոչարի փողոցին հարող տարածքի (Կորի փողոցի մոտ՝ Կրիվոյ թաղամաս) բնակելի, հասարակական, հյուրանոցային համալիրի շինարարության կառուցապատման ներդրումային ծրագիր</p>	<p>Երվանդ Քոչարի փողոցին հարող տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 3,7 հա: Նշված տարածքը պայմանականորեն բաժանված է 3 լոտերի (13 650, 13 031 և 10 245 ք. մ): Ներկա պահին տարածքում գտնվում են բազմաթիվ հին բնակելի շինություններ, որոնք հանրության գերակա շահերի ապահովման նպատակով նախատեսվում է օտարել և տարածքը վերակառուցել: Ներդրողի /կառուցապատողի հետ մտադրությունների մասին հուշագրի ստորագրման հիման վրա քաղաքապետարանը կարող է ներդրողի պատվերով կազմակերպել օտարվող հողամասերի և շենք/շինությունների գնահատման գործընթացը, ի վերջո հանձնելով կառուցապատողին ազատ շինարարական հրապարակը: Նշված տարածքում առաջարկվում է կառուցել՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1.Ստորգետնյա ավտոկայանատեղի ընդհանուր՝ 41 630 քմ մակերեսով,</li> <li>2.Առևտրային տարածքներ ընդհանուր՝ 9 760 քմ մակերեսով,</li> <li>3.Հասարակական տարածք ընդհանուր՝ 2450 քմ մակերեսով,</li> <li>4.Մանկապարտեզ կամ այլ մանկական նախադպրոցական կրթության տարածք ընդհանուր՝ 1 750 քմ մակերեսով</li> </ol>	<p>հետագա ընթացքը կախված է ներդրողի/ներքի ներգրավման հետ, դրա հիման վրա տարածքի գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշման կայացման հետ: Դրանից հետո հնարավոր է սկսել իրացման աշխատանքները կազմակերպել մոտավոր 2 տարվա ընթացքում առկա մոտ 200-ից ավել գույքի իրացումը:</p>	<p>«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակի» ՀՈԱԿ, Երևանի քաղաքապետի խորհրդականի կողմից /համակարգվող ստորաբաժանումներ/, ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն</p>	
---	---	--	--	--

